

# ԾՐԱԳԻՐ

## ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՁԵՌՆԱՐԿԻ

ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ 8-9-10  
ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ 1939

891.99(07) 2841

7-98: ~~7 pages~~  
has gaps, everywhere.

13.vi	25.vii	171

ԽՍՀՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ  
ՖԻԼԻԱԼԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՑ

891.99.09(07)  
Ճ-98

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961 Ք.

# Ծ Ր Ա Գ Ի Ր

## ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՁԵՌՆԱՐԿԻ

(ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ 8-9-10-ՐԴ  
ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ)

Խմբագրութեամբ՝ Հովհիկ ՄԵԼԻՔՅԱՆԻ

A II-284t  
30816



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐ ԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ 1939

**ПРОГРАММА**  
**пособия по истории армянской литературы**  
Гиз Арм. ССР, Ереван 1939

## ԽՄԲԱԳՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ

Հայ ժողովրդի կուլտուրան բաղձադարյան պատմութիւն, կյանք ունի: Առհասարակ վորքան հին է հայ ժողովուրդը, նույնքան հին է նրա կուլտուրան: Հայոց դրավոր գրականութեան առաջին կոթողները պատկանում էն մեր թվականութեան 5-րդ դարի սկզբներին, իսկ այդ նույն կոթողների միջոցով մեզ հասած ժողովրդական բանահյուսութեան փայլուն նմուշները (վեպերը, առասպելները, յերգերը) պատմում են, վոր հայերը գեղարվեստական խոսք են ստեղծել զեռ խոր անցյալում, հեռավոր հեթանոսական շրջանում, հայկական եթնոսի դոյութեան յուսաբացին:

Այսպիսով խորհրդային հայ ժողովուրդն իր նախնիներից ժառանգել է մի գրականութիւն, վորը պատկանում է աշխարհի հնագույն կուլտուրաների թվին և վորը մարդկութեան պատմութեան զարգացումով ստեղծված գեղարվեստական լավագույն արժեքներից մեկն է: Այդ գրականութիւնը հաղթական յերթով մտնում է սոցիալիստական հասարակութեան կուլտուրայի վոսկի Փոնդը: Այդ գրականութեան պատմութիւնը գրելու դործը դրված է խորհրդային գիտական հիմնարկների, նրանց կադրերի վրա: Այդ գրականութիւնը կոչված է մասնակցելու կոմունիզմի կառուցման, մեր ձեով աղղային, բովանդակութեամբ կոմունիստական կուլտուրայի կերտման ու խորհրդային յերիտասարդութեան դաստիարակութեան մեծ պայքարին: Հայ ժողովրդի յերդվյալ թշնամիները — դաշնակցական-տրոցկիստական բանդիտները, վոր տարիներ շարունակ դիմակաւորված վնասում ենին խորհրդային, գիտական, գրական աշխատանքներին, նենդութեամբ պրովոկացիայի յենթարկեցին մեր աղղային կուլտուրական ժառանգութիւնը, հայտարարելով նրա մեծ մասը «կղերա-Փետղալական», «կղերա-պահպանողական», «բուրժուա-նացիոնալիստական» և այլն: Նրանք բամբասում ենին, վոր Փալստոս Բյուզանդացին, Մովսես Սորենացին, Ղարար Փարպեցին, Յեղիշեն և մյուսները յեղել են յեկեղեցական գրողներ ու գրել են հայ թագավորների և իշխանների պատմութիւնը, հետեապես վնասակար են: Աբովյանը, Ալիշանը, Պատկանյանը,

Բաֆֆին, Ծերենցը և մյուսները նրանց մեկնարանությամբ դուրս ել  
պալիս, վոր պատկանում են դաշնակցությանը: Վնասարարների դըլ-  
խավոր նպատակն եր կարծիք ստեղծել, վոր հայ ժողովրդի անցյալ  
կյանքը հերոսությունից ու լուսավոր մտքից զուրկ խավարի մի թա-  
գավորություն է, իսկ մյուս կողմից՝ վարկարեկել խորհրդային իշխա-  
նությունը, իբր թե նա չի հանդուրժում աղղային կուլտուրական ժա-  
ռանգությունը: Դրա համար նրանք ժողովրդի կյանքի, դասակար-  
գային պայքարի, իշխող դասակարգերի զաղափարների աղղեցու-  
թյունը գրականության մեջ մեկնել են նենդորեն:

Առհասարակ ավելորդ դործ է համարվել հայոց գրականության  
պատմության ուսումնասիրությունը: Դպրոցներում հայոց գրակա-  
նությունը ավանդվել է թերի և այն ել անդեմք ու անսխտեմ քրե-  
ստոմատիաների միջոցով: Այդ քրեստոմատիաների բնորոշ դժերից  
մեկը միշտ ել յեղել է այն, վոր նրանք հայոց գրականությունն իբ  
զարգացման գլխավոր գծերով սկզբից մինչև մեր որերը յերբեք չեն  
ընդգրկել: Տարիներ շարունակ հայոց գրականության պատմությու-  
նից դուրս են վտարվել մեր դանձերը՝ ժողովրդական բանահյուսու-  
թյունը և հին գրականությունը:

Դրա հետևանքով մինչև այժմ ել մեր միջնակարգ դպրոցավարու-  
ները դաղափար չունեն այն մասին, վոր հայոց գրականությունը  
սկզբնավորվում է 5-րդ դարում, վոր մեր աղղային գրականության  
առաջին նախաձեռնողը յեղել է 5-րդ դարի սկզբին գիտնական, հայոց  
դրերն ստեղծող Մեսրոպ Մաշտոցը: Նրանք չգիտեն, վոր հեռավոր  
անցյալում մեր ժողովուրդն աշխարհի կուլտուրային տվել է  
Ադանթադեզոս, Բյուզանդ, Փարպեցի, Յեղիշե, Խորենացի, Սերեոս,  
Շիրակացի, Դ. Անհաղթ, Արծրունի, Նարեկացի, Այգեկցի, Գոշ և  
այլն:

Այդ քրեստոմատիաներում հայոց գրականությունից դուրս են մնա-  
ցել այնպիսի հեղինակներ, ինչպիսիք են՝ Ղեվոնդ Ալիշանը, Մկրտիչ  
Պեչիկթաշլյանը, Ռափայել Պատկանյանը, Շահաղիղը, Բաֆֆին, Ծե-  
րենցը, Ռայանը և ուրիշները:

Լենինի-Ստալինի կուսակցությունը խորհրդային ժողովրդի անմի-  
ջական սոցիալիստիկ շահախնդի մեր ժողովրդի, նրա կուլտուրայի և  
յերջանիկ կյանքի թշնամիներին: ՀԿ(բ) կուսակցության կենտրոնա-  
կան կոմիտեն միջոցներ ձեռք առավ վնասարարության հետքերը վե-  
րացնելու համար: Մասնավորապես մի շարք ձեռնարկումներ յեղան  
մեր ժողովրդի անցյալի մեծ կուլտուրան վերադնահատելու, բար-  
ձրացնելու համար: Դրա ցայտուն որինակն է մեր «Սասունցի Դավիթ»

եպոսի հաղարամյա հորելյանի կաղմակերպումը: Պատմական այդ  
մաստը, համարձակությամբ կարելի չե ասել, նոր շրջան և բացում  
հայ ժողովրդի պատմության ու նրա կուլտուրայի լենինյան սևամե-  
նասիրության ու գնահատման համար:

Այդ կարևորագույն նոր ձեռնարկումներից մեկն էլ հայոց դրա-  
կանության պատմությունը գրելն է: Կուսակցության կենտրոնական  
Կոմիտեյի հանձնարարության համար ԱՐՄՖԱՆ-ի Գրականության և Լեզվի  
Ինստիտուտը պատրաստում է հայ դրականության պատմության հա-  
մառոտ դասընթացը: Այն գրվում է վորպես դրականության դասա-  
դիրք հայկական միջնակարգ դպրոցների բարձր դասարանների (8, 9,  
10) համար: Այդ հատորում շարադրվում է հայոց դրականության  
պատմությունն սկզբից մինչև մեր օրերը:

Առաջին հարցը, վոր տրվում է հայոց դրականության դասընթա-  
ցը գրողներին, դա դրականության պատմության կոնցեպցիայի խըն-  
դիրն է:

Վո՞րն է հայոց դրականության պատմության կոնցեպցիան, ի՞նչ  
կոնցեպցիայով և շարադրվում այդ պատմությունը: Լենինը, բացա-  
տրելով ուսական բանվորական մամուլի պատմության ետապները,  
գրում է.

«Բանվորական մամուլի պատմությունը Ռուսաստանում ան-  
խախտելի կերպով կապված է դեմոկրատական ու սոցիալիստա-  
կան շարժման պատմության հետ: Դրա համար էլ, միայն աղա-  
տադրական շարժման դլխավոր ետապներն իմանալով և, վոր  
հնարավոր է իսկապես հասկանալ, թե ինչու բանվորական մա-  
մուլի նախապատրաստումը և առաջացումը գնաց այս ուղիով  
և վոչ մի ուրիշ» (Հատոր XVII, յեր. 341):

Լենինի այս բացատրությունից հայոց դրականության պատմու-  
թյան վերաբերյալ հանում ենք հետևյալ յեզրակացությունը. հայոց  
դրականության ուղղությունները և ձևավորումը, դրական յերևույթ-  
ների հրատարակ գալը, դրականության դարգացման թափի բարձրա-  
ցումը և իջեցումը պետք է ուսումնասիրել սերտ կերպով կապված  
ժողովրդի աղատադրական շարժման ետապների հետ:

Դասընթացը բաժանվում է չորս հիմնական շրջանների — հին  
շրջան (մինչև 10-րդ դարը), միջին շրջան (10-18-րդ դարը), նոր շրջ-  
ան (18-րդ դարից մինչև Հոկտեմբերյան Սոցիալիստական հեղափո-  
խությունը) և վերջապես խորհրդային շրջան: Ամեն մի շրջան իր  
մեջ ունի բաժիններ ու յենթաբաժիններ:

Նպատակ է դրված համառոտ դասընթացի միջոցով այն ծավալով  
ու վորակով գնել դրականության պատմության ավանդումը, վոր

Հայկական միջնադարի դարոց ավարտող յերիտասարդությունը իմանա-  
հայ ժողովրդի գրականությունն իր դարդացման հիմնական ետապնե-  
րով ու գծերով: Վոչ թե կցկտուր, աղավաղված մի քանի տեղեկու-  
թյուններ միջնադարյան սյուղիայի և այնուհետև նոր շրջանի մասին,  
ինչպես մինչև այժմ կատարվում էր, այլ լուրջ, սլարդ, հետաքրքրա-  
կան պատմություն հայոց ժողովրդական բանահյուսության, հայոց  
գրերի գյուտի, գրավոր գրականության սկզբնավորման, դարդացման  
ու միջադրային կապերի մասին: Այդ հնարավորություն կտա մեր յե-  
րիտասարդությանը—համեմատաբար ամբողջականորեն ճանաչելու հայ  
ժողովրդի հոգևոր արտադրության հարստությունը և դիտենալու, թե  
ինչ ներդրում է կատարել մեր ժողովուրդն ընդհանուր մարդկության  
կուլտուրայի դանձարանը:

Նպատակ է դրված աշխուժ ձեռնով, սլարդ, պատկերավոր, հրա-  
պուրիչ ներկայացնել գրական կարևորագույն յերևույթները, գրողնե-  
րի կյանքն ու ստեղծագործությունը, ցույց տալ թե պատմության  
տարբեր ետապներում նրանք ինչ վորակով են պատկերել ժողովրդի  
կռիվը սոցիալական անարդարության դեմ և ազգային ազատագրու-  
թյան համար:

Դասընթացի առաջին գլուխն սկսվում է հեթանոսական շրջանի  
բանահյուսության վերլուծումով («Հայկ և Բել», «Արա և Շամի-  
րամ», «Սաթենիկ և Արտաշես», «Արտավազդ», «Տիգրան և Աժդա-  
հակ», «Վահագն» և այլն): Բացատրվում է, թե այդ պատմաա-  
ռասպելական ու դիցարանական դոհարների մեջ ինչպես է պատկերել  
հայ ժողովուրդն իր պայքարն ոտար նվաճողների դեմ:

Հին շրջանի հաջորդ բաժնում սլարդ ու հակիրճ պատմվում է հայ  
գրականության սկզբնավորումը: Լուսաբանվում է հայոց գրերի գյու-  
տը: Ցույց է տրվում, վոր առաջավոր աղնավանության պայքարը  
հայոց դիր ու գրականությունն ստեղծելու համար անմիջապես բըղ-  
խում էր Հայաստանի անկախության պաշտպանության շահերից: Լու-  
սաբանվում է քրիստոնեական կրոնի ազդեցությունը պատմական այդ  
շրջանի գրականության վրա: Բացատրվում է առաջին շրջանում հու-  
նարենից ու ասորերենից կատարվող թարգմանական գրականության  
նշանակությունը: Վերջապես լուսաբանվում է կարևոր մի խնդիր—  
հայ ֆեոդալական հասարակության գրական լեզվի՝ գրաբարի առա-  
ջացումը:

Հինգերորդ դարի յերկրորդ կեսից ծաղկում է հայոց ազգային  
ինքնուրույն գրականությունը: Հայտնի յե, վոր 5—10-րդ դարերի մեր  
գրողները սովորաբար կոչվում են պատմիչներ: Այնինչ այդ շրջանի

գրողներն յերկերը սասկ պատմական դրվածքներ չեն, նրանք ավելի շուտ պատմական ու դեղարվեստական դրականության միաձուլումն են: Այդ շրջանում գրողը հանդես է գալիս վորպես հանրագետ, և դրականությունը դեռ չերտավորվել: Մեր պատմագիրները՝ Աղաթանգեղոսը, Բյուզանդացին, Ղաղար Փարպեցին, Մովսես Խորենացին, Յեզիչեն, Սերեոսը և մյուսները դեղարվեստորեն են դրել հայ ժողովրդի պատմությունը, արտացոլել ժողովրդի պայքարը ոտար բռնավորների դեմ, մերկացրել ներքին դավադրությունները, դավաճանությունները, մեծարել հայրենասեր հերոսներին, լայն չափերով ողբագործել ժողովրդական բանահյուսությունը (վեպերը, առասպելները և այլն) կերտել են դեղարվեստական սքանչելի հատվածներ, դունադեղ լեզու, սլաակերավոր միտք: Համառոտ բնութագրվում են այդ շրջանի գրողները և նրանց յերկերը: Հին շրջանը յեղրավակվում է նրանով, զոր տեղեկություններ են տրվում հայկական կուլտուրայի մյուս բնագավառների ծաղիման մասին:

Հայոց դրականության միջին շրջանը ծնունդ է առնում այն հերասական պայքարում, վոր 7—10 դարերում մեր ժողովուրդը մղեց արաբական ու բյուզանդական բռնավորների դեմ: Հայ ժողովուրդը վորպես այդ պայքարի դունադեղ արտացոլումն ստեղծեց «Սասունցի Դավիթ» եպոսը: Դասընթացի միջին շրջանը դրա համար էլ բացվում է «Սասունցի Դավիթ» եպոսով:

Միջին շրջանի առանձնահատկությունն այն է, վոր արդեն հրապարակ են գալիս սրոֆեսիոնալ բանաստեղծներ— գրողներ (Նարեկացի, Շնորհալի, Այգեկցի և այլն), և պատմագրությունն արդեն զխտվում է վորպես հայոց ընդհանուր կուլտուրայի յերևույթներից մեկը: Այդ շրջանում է, վոր գրողներն ուժեղ բեկում են կատարում դեպի աշխարհիկ թեմատիկան:

10—15-րդ դարերը Բրյուսովը համարում է հայոց դրականության վերածնության շրջանը, և հաստատում է, վոր հայոց սրեղիայի հաղթանակը միջնադարում համամարդկային յերևույթ էր:

Միջին շրջանում առաջին խոշոր դրական յերևույթը Գրիգոր Նարեկացին է: Ընդունված է յեղել Նարեկացուն համարել միասիկ, աեակցիոն, կրոնամուռ ու վոչ մի լուսավոր գիծ չունեցող գրող: Մեր դասընթացում Նարեկացու խնդիրը մեկնարանվում է պատմականորեն: Բացատրվում է բանաստեղծի եպոխան, նրա կյանքը, ստեղծագործությունը: Ուսումնասիրությունը ցույց է աալիս, վոր Նարեկացին կապված է յեղել թոնդրակեցիների դյուղացիական շարժման հետ և այդ կապակցությամբ յեկեղեցու կողմից խիստ հալածվել է. նրա

միասնացիցմը, նրա ձգտումը դեպի յերկնային թեման հակասական և նարեկացին դրել և կրոնական յերդեր, բայց յերդել և և աշխարհիկ կյանքը, բնությունը, դարունը, ջլարադուկ, լայնաթիկունք սայլապանին: Նարեկացու կրոնական աշխարհայացքը բոլոր յերկերում չե, վոր իշխում և: Այդ լույսի տակ և դիտվում նաև Ներսես Շնորհալիի իր ստեղծագործություններով:

Միևիթար Գոչի, Վարդան Այդեկցու առակները, Ֆրիկի, Կոստանդին Յերդնկացու, Մկրտիչ Նադաչի, Գրիգոր Աղթամարցու, Հովհաննես Թլկուրանցու, Նահապետ Քուչակի սյոնդիան մեկնարանվում և վորպես հայոց գրականության վերածնության հաղթանակը: Յուրջ և տրվում նաև նրանց աշխարհայացքի սահմանափակվածությունը:

Միջին շրջանի ամեն մի յենթարածնում դեղարվեստական դրադանության ամփոփմանը հաջորդում և այդ շրջանի հայկական սրտամազրության, նկարչության, ճարտարասլետության, յերաժշտության իզարդ ու սեղմ նկարագրությունը, բնորոշումը:

Վերջապես այդ բաժնում աշակերտությանը տեղեկություն և արքվում 16—18-րդ դարերի հայոց տալգրության սրտամության մասին:

Հայ նոր գրականության շրջանը բացվում և 18-րդ դարի վերջին և 19-րդ դարի սկզբին: «Սալխի նոքար» Սայաթ-Նովան արդեն յեդրափակել էր միջնադարը, և իր հանձարի ճառագայթները նետել դեպի նորագույն շրջանը: Գաղութներում (Հնդկաստան, Յեվրոպա) առաջավոր հայ մտավորականությունը մտորում էր նորի մասին: Սակայն սրտամական այդ սրոցեսն ամբողջ ուժով դուրս ժայթքեց ուշ, այն ժամանակ, յերբ Արևելյան Հայաստանն անցավ ռուսական կայսրության գերիշխանության տակ:

19-րդ դարի առաջին քառորդում Ռուսաստանը նվաճեց Անդրլիովկասը և Արևելյան Հայաստանը: Ժողովուրդը տնտեսական, սոցիալական, քաղաքական սպառնանների և հարաբերությունների նոր հում մտով: Հայաստանը դարձավ ցարիզմի ստրուկը:

Ժողովրդի սոցիալական, տնտեսական, քաղաքական նոր վիճակը իր դարդացման սրոցեսում ամեն մի ետապին համապատասխան առաջադրեց կուլտուրական ու գրական նոր սյահանջներ:

19-րդ դարի 30—40-ական թվականներին, հակառակ Ֆեոդալական-կղերական խավերի դիմադրության, ծավալվեց մի ամբողջ լուսավորական շարժում (Արտվյան): Այդ շարժման և յությունը ժողովրդայնությունն էր: 50—60-ական թվականներին այդ շարժումը յերկրինդվեց — մի փեղկը հանդեց սյայբարի հեղափոխական-դեմոկրատական սրենքներին, իսկ մյուսը՝ բուրժուական-ադդայնական լիբերալիզմին:

Հայ հեղափոխական դեմոկրատիան Հայ ժողովրդի բախտը, նրա ազա-  
տության հեռանկարները կապեց ուստի ժողովրդի բախտի, նրա ազա-  
տագրման հեռանկարների հետ: Հայ բուրժուական մտավորականու-  
թյան չբընտրած ծաղած առանձին դժգոհությունները վոչ թե ցարիզմի  
եյության դեմ եյին, այլ նրա գործելակերպի խտուրթյունների:

Նոր գրականության նախահայր Խաչատուր Աբովյանը պահան-  
ջում էր՝ պատկերել ժողովրդի կյանքը, դրել ժողովրդի համար, ժո-  
ղովրդին հասկանալի լեզվով, նախապատրաստել ժողովրդի ազգային  
աղատագրական կռիվը: Աբովյանի լուսավորական մանիֆեստը ստեղ-  
ծագործական ծրագիր հանդիսացավ ամբողջ 19-րդ դարում Հայ գրա-  
կանության առաջավոր ներկայացուցիչների համար:

Աբովյանից հետո Միքայել Նալբանդյանը, մեծ հեղափոխականը,  
հատուկ կրքոտությամբ հայտարարեց, վոր չի կարելի հանդուրժել  
հայրենիքի և ժողովրդի թշվառ վիճակը, կոչ արեց սիրել ազատու-  
թյունը, կռվել ազատության համար, և ինքը հերոսաբար նահատակ-  
վեց վորպես ազատության բանակի փայլուն առաջնորդը:

Այնուհետև լուսարանվում են Ալիշանի, Պոռչյանի, Աղայանի,  
Պատկանյանի, Սունդուկյանի, Պեչիկթաշյանի, Դուրյանի, Բաֆֆու,  
Ծերենցի, Մուրացանի, Պարոնյանի, Ծատուրյանի, Հովհաննիսյանի,  
Շիրվանդադեյի, Թումանյանի, Ռոյանի, Նար-Դոսի, Փափաղյանի ըս-  
տեղծագործությունները: Ֆույց և տրվում նրանց դերը հայոց նոր գր-  
ականության սրտմության մեջ: Մեկնարանվում և բուրժուական  
ազգայնականության արտահայտությունն առանձին գրողների յերկե-  
րում (Բաֆֆի, Պատկանյան և այլն): Լուսարանվում և նոր գրակա-  
նության նոր եպոսը, վոր բացվում և բուլչեիկյան պոետ Հակոբ Հա-  
կոբյանի հեղափոխական ստեղծագործություններով:

Բանաստեղծներ Կուրղինյանի, Իսահակյանի, Տերյանի, Վարու-  
ժանի յերկերը ուժեղ կամ պակաս չափով սնվեցին այն հակասու-  
թյուններով, վոր ապրեց հեղափոխության ուղեկից Հայ մտավորակա-  
նության մի զգալի մասը 20-րդ դարի սկզբներին:

Կարևորագույն խնդիր և ցույց տալ, թե ինչպես Հայ ազգայնա-  
կան բուրժուազիան դիմադրում և առաջավոր գրականությանը, չի  
հանդուրժում ազատասեր գրողներին: Դրան հակառակ հայձարքսիտ-  
ները, Լենինի, Ստալինի աշակերտները կրքոտությամբ պաշտպան են  
կանգնում առաջավոր գրականությանը, գրողներին և պայքար են ծա-  
վալում Հայ գրականության հետադա գարգացման համար:

Մեր նոր գրականության գարգացումն ամենասերտ կերպով կապ-  
ված և յեվրոպական առաջավոր գրականության և, առաջին հեր-

թին, ուստի մեծ ժողովրդի մեծ դրահանութեան պատմութեան հետ : Այդ կապերի սլարդարանումը լուս է սիրում, թե ինչ բարերար ազգեցութիւնն է ունեցել ուստի ժողովրդի կուլտուրան հայ ժողովրդի կյանքի և կուլտուրայի վրա :

Դասընթացի բնորոշ կողմերից մեկն էլ այն է, զոր վերացվում է հայոց դրահանութեան յերկու հատվածների՝ թյուրքահայ և ուսաստանայ հատվածների բաժանելը : Մեր դրահանութիւնը բուրժուական ազգայնական մտավորականութեան կողմից յերկու հատվածի յե բաժանվել միայն անցյալ դարի 60—70-ական թվականներին՝ կապակցված «հայկական հարցի» հետ : Գրահանութիւնը յերկու հատվածի բաժանելը սահմանափակել է նրա նշանակութիւնը ժողովրդի ազատագրական կռիւմ : Չնայած այն բանին, զոր յերկիրը բաժանված եր յերկու բունակալների միջև, չնայած կուլտուրական ակունքների և լեզվական մթերքի վորոշ տարբերութիւններին, հայոց դրահանութեան յերկու հատվածների մեջ քաղաքական-դադափարական պայքարի պրոցեսները և մոտիվները միևնույնն են : Դուրջանը վոչ թե արեւմտահայ բանաստեղծ է, այլ հայ բանաստեղծ, ինչպես և Մուրացանը վոչ թե արեւելահայ վիպագիր է, այլ հայ վիպագիր : Վերացնելով հայոց նոր դրահանութեան հատվածների բաժանման պրակտիկան՝ ստեղծվում է մի ժողովրդի միասնական դրահանութեան պատմութիւն :

Խորհրդային հայ դրահանութեան պատմութիւնն սկսվում է Հայաստանի խորհրդայնացումով :

Հայաստանի խորհրդայնացումը, հայ ժողովրդի ազատագրումը ուստի մեծ ժողովրդի ողնութեամբ նոր շրջան ստեղծեց հայոց դրահանութեան դարդացման համար : Ազատագրված հայ ժողովուրդը խորհրդային ժողովուրդների մեծ ընտանիքում դարձավ մարդկութեան յերջանկութեան կերտման՝ կոմունիզմի կառուցման առաջին ճարտարապետներից մեկը : Ազատագրված, պետականութիւնն ստացած, պատմական լուսապայծառ միտիւն ընդունած հայ ժողովուրդը բոլոր պայմաններն ստեղծեց իր դրահանութեան դարդացման համար :

Լենինի և Ստալինի հանճարները լուսավորեցին խորհրդային դրահանութեան դարդացման ուղիները : Մեծ Ստալինն իր հայրական հողատարութեան տակ առավ խորհրդային դրահանութիւնը, ցույց տվեց, զոր դրողը մարդկային վոգու ճարտարապետ է, և այդ ճարտարապետը մեր հերոսական եպոխտի դեղարվեստորեն վերարտադրելու համար պետք է ղինված լինի հեղափոխական աշխարհայացքով՝ մարքոիզմ-լենինիզմով :

Խորհրդային դրահանութիւնն աճեց ու դարդացավ բուրժուական դասակարգերի մնացորդների, կուլակութեան, ֆաշիստական ազնու-

առւրայի՝ տրոցկիդի, բուխարինականութեան, նացիոնալիզմի գեմ  
մզած պայքարում:

Պատմւում է այն մեծ աշխատանքի մասին, վոր կատարել է Լե-  
նինի—Ստալինի կուսակցութեանը խորհրդային ժողովուրդների ձեռ-  
աղղային, բովանդակութեամբ սոցիալիստական կուլտուրայի ստեղծ-  
ման համար:

Առանձին ուսումնասիրութեան են յենթարկւում Արազու, Դե-  
միրճյանի, Զորյանի, Զարյանի, Սարյանի, Սիրասի և մյուսների  
յերկերը: Ընդհանուր ակնարկում լուսարանւում է գրական յերիտա-  
սարդութեան ստեղծագործութեանը:

Դասընթացը յեղբաւիակւում է խորհրդային հայ ժողովրդական  
հարուստ ստեղծագործութեանը նվիրւած վերլուծական ակնարկով:

Ահա այն զլխավոր հարցերը, վորոնք դրւած են գրականութեան  
դասադրքում: Այդ հարցերը համառոտ, կոնսպեկտի ձևով լուսարան-  
ված են և սույն ծրագրում: Մենք ծրագիրը նախորոք տպագրութեան  
ենք հանձնում, նպատակ ունենալով մեր հասարակայնութեանը ծա-  
նոթացնել դասադրքի բովանդակութեանը, լսել նրա հեղինակա-  
վոր խոսքը, ոժանդակութեանը: Մեր ծրագիրը դիտաւորյալ կերպով  
չի հարմարւած դպրոցական դասավանդման պահանջներին. նա ա-  
վելի լայն է, քան պետք է լինի դպրոցական ծրագիրը: Սակայն նա  
մեծ չափով կողնի հայ գրականութեան դասատուներին իրենց աշ-  
խատանքում:

Ծրագրի վրա աշխատել են Ինստիտուտի գիտական աշխատողներ՝  
Խ. Սարգսյանը, Ս. Հարութեանյանը, Մ. Մկրչյանը, Ռ. Զարյանը  
և Ա. Ասատրյանը:



Գեղարվեստական դրականությունն ու նրա առանձնահատկությունը (սպեցիֆիկա) :

Լենինյան ուսմունքը անցյալի հուլիսո՛ւրական ժառանգության քննադատական յուրացման ու ուղտադործման մասին և Հայ դրականության սլատմությունը :

Հայ ժողովրդի դարավոր սայփարն արտաքին ու ներքին բռնակալների դեմ և այդ սայփարի արտացոլումը Հայ դրականության մեջ : Ժողովրդի անկախությունը և ազատագրումը ամեն տեսակ ճշնշումից ու շահագործումից՝ իբրև Հայ դրականության հիմնական դադար :

Հայ ժողովրդի ավելի քան յերկհաղարամյա դրականության տեղը համաշխարհային դրականության մեջ :

I. ՀԱՅ ՀԻՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՅՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ

Ժողովրդական բանահյուսութեան (Փոլիլորի) առանձնահատկութեանները: Վ. Ի. Լենինը «Ժողովրդական տենչանքներն ու ակընկալութեանները» Փոլիլորի մեջ արտահայտված լինելու մասին: Խորհրդային Փոլիլորն իբրև «ձեռք աղգային, բովանդակութեամբ սոցիալիստական կուլտուրայի» (Սաալին) բաղադրիչ մասերից մեկը: Մ. Գորկին Փոլիլորի կապի մասին մարդու աշխատանքային դործունեության հետ: Ժողովրդական բանավոր գրականության խորութեանն ու գեղարվեստական կատարելութեանն ըստ Գորկու:

Ժողովրդական բանահյուսութեան նմուշները Հայաստանում. Եպոս, առասպել և այլն: Հայ գուսանները: Մեր սլաոմիչները հազորդած տեղեկութեանները գուսանների և նրանց արվեստի մասին: Ժողովրդական բանահյուսութեան վերաբերող մի շարք բառերի հիշատակութեանը նույն սլաոմիչների մոտ. դրույց, վիպասանք, յերդ վիպասանաց, առասպել, լալիք, գողթան յերդեր, արվեստականք, վարձակներ և այլն: Մովսես Խորենացու «Պատմութեան» մեջ սրահպանված գուսանական ստեղծագործության բառացի նմուշները: Ժողովրդական եպոսի և առասպելների հնութեանը («Հայկ և Բել», «Արա և Շամիրամ» և այլն): Հայաստանի հին ժողովուրդների՝ ոտար նվաճողների դեմ մղած սրայքարի արտացոլումը այդ առասպելների մեջ: Պարսկական և հռոմեական տերութեանների դեմ հայ ժողովրդի մղած հերոսական սրայքարի արտացոլումը հին առասպելների և եպոսի մեջ («Տիգրան, Աթահակ, Վահագն», «Արտաշես, Սաթենիկ, Արտալաղ», «Տորք Սնդեղ» և այլն): Հին եպոսից հասած բառացի նմուշները: Եպոսի բանաստեղծական բարձր կուլտուրան և մշակվածութեանը:

II. ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԻԶԲԸ

Կուլտուրան և գրականութեանը Հայաստանում մինչև տառերի գյուտը: Խալդական սեռագիր արձանագրութեանները: Պարսկա-

կան դիրն ու գրականութիւնը Հայաստանում: Հունա-հռոմեական  
աղղեցութիւններ: Քրիստոնեական գրականութիւնը Հայաստանում  
ասորի և հաւյն լեզուներով: Մինչև տառերի դյուարը հայերեն գրա-  
կանութեան գոյութեան խնդիրը:

Հայաստանի քաղաքական վիճակը 4-րդ դարի վերջում ու 5-րդ  
դարի սկզբում: Հայաստանի բաժանումը Բյուզանդիայի և Պարս-  
կաստանի միջև. այս տերութիւնների քաղաքականութիւնը: Հա-  
յաստանի անկախութեան սպառնացող լուրջ վտանգը: Հայկական  
պետութեան նախաձեռնութիւնը դիր ու գրականութիւնն օտեղծելու  
քնադավառում. հայոց դրի և գրականութեան նշանակութիւնը Հա-  
յաստանի անկախութեան սրահպանման դործում: Գրերի դյուարը 5-րդ  
դարի սկզբում: Մեսրոպ Մաշտոցի կատարած աշխատանքը. յեկե-  
ղեցականութեան դերն այդ դործում: Առաջին հայերեն գրքերը.  
Թարգմանութիւններ և ինքնուրույն աշխատութիւններ: Առաջացած  
գրական ժանրեր— սրատմութիւն, յեկեղեցական բանաստեղծու-  
թիւն, դավանաբանական, կրօնա-փիլիսոփայական դրվածքներ,  
քրիստոնեական դավանանքի և հին հունական փիլիսոփայութեան  
հարաբերութեան հարցը: Յեղինիկ Կողբացու «Յեղծ աղանդոց» դիրքը:  
Նոր ստեղծված գրականութեան լեզուն (դրարար): Գրարարը Ֆեո-  
դալական հասարակութեան սկտական գրական լեզուն:

### III. ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 5—10-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ

#### 1. ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ (4-րդ դար)

Պատմագրութիւնը վորսլես հայոց հին գրականութեան հիմնա-  
կան ժանրը:

Աղաթանդեղոսի «Պատմութեան» հարցը բանասիրութեան մեջ:  
Նրա «Պատմութեան» վիպական մասերը (քրիստոնեական լե-  
զենդներ, աշխարհիկ եպոսի հիման վրա դրված հատվածներ— հատ-  
կապես Տրդատի մասին և այլն): Ժողովրդական բանահյուսութիւն-  
նից մնացած եպիտեամներ և համեմատութիւններ Աղաթանդեղոսի  
մոտ: Մտը Աղաթանդեղոսի «Պատմութեան» լեզենդների մասին:

#### 2. ՓԱՎՍՏՈՍ ԲՅՈՒՋԱՆԻ (4-րդ դար)

Կենսագրական տեղեկութիւններ: Փալստոսի «Հայոց պատմու-  
թիւնը»: Հայաստանի քաղաքական անկախութեան և միասնութեան  
դադափարների արծարծումը այդ «Պատմութեան» մեջ: Վիպական դըր-

վաղների առատութիւնն (Արշակ, Գնել և Փռանձեմ, Արշակ, Վա-  
ռակ և Շապուհ, Պապ և Մուշեղ և այլն) : Ժող. բանահյուսութեան  
ուժեղ ազդեցութիւնը Բյուզանդի վոճի վրա : Հայ ժողովրդի պարս-  
կական և հռոմեական բռնակալութեան դեմ մղած դարավոր պայքա-  
րի արտահայտութիւններն այդ դրվաղների մեջ : Հողևորականու-  
թեան դեմ ուղղված ժողովրդական յերդիծական սանդագործու-  
թեան ոգտագործումը Փալստոսի կողմից («Յաղաղս Յոհաննու եպիս-  
կոպոսի») : Փալստոսի «Պատմութիւնը» — միջազգային կուլտուրական  
արժեք : Փալստոսի «Պատմութեան» թեմաների մշակումը հայ նոր  
դրականութեան մեջ :

### 3. ԿՈՐՅՈՒՆ (5-րդ դար)

Գրել և Մեսրոպ Մաշտոցի կյանքը և հայ տառերի գյուտը : Կոր-  
յունի լեզուն և վոճը :

### 4. ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅԻ (5-րդ դար)

Կենսագրական տեղեկութիւններ : Խորենացին վորպես հայ խո-  
չորագույն պատմիչը և իր ժամանակի ամենակուլտուրական գրողը :  
Խորենացին վորպես հայրենիքի անկախութեան և միասնութեան դա-  
դախարների ջերմ պաշտպան : Խորենացին և հունական կուլտուրան :  
Նրա հայացքները պատմագրութեան մասին և պատմութեան դը-  
րելու մեթոդը : Նրա վերաբերմունքը դեպի ժողովրդական բանա-  
հյուսութիւնը : Խորենացու «Պատմութեան» դժուար մասի ժողովրդա-  
կան բանահյուսութեան հիման վրա դրելու հանգամանքը . նրա նկա-  
րագրութիւնների և պատմելու վոճի վիպական բնույթը : Խորենացու  
«Պատմութեան» համաշխարհային արժեքը :

### 5. ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑԻ (5-րդ դար)

Կենսագրական տեղեկութիւններ փարպեցու մասին : Փարպեցու  
պատմական դրքի բովանդակութիւնը : Գեղեցիկ նկարագրական  
և ջեր փարպեցու «Պատմութեան» մեջ : Ղազար փարպեցու «Թուղթը» :  
Յեկեղեցականութեան մերկացումը փարպեցու կողմից : Խճնչն և գնա-  
հատել նայրանդյանը փարպեցու «Թուղթ»-ի մեջ : Փարպեցու «Պատ-  
մութեան» կուլտուրական մեծ արժեքը :

### 6. ՅԵՂԻՇԵՆ (5-րդ դար)

Կենսագրական տեղեկութիւններ Յեղիշեյի մասին : Յեղիշեյի  
«Պատմութիւնը» : 5-րդ դարում Հայաստանի անկախութեան համար  
մղվող պայքարի դեղարվեստական արտացոլումը Յեղիշեյի «Պատ-

մության» մեջ: Վարդանի և Վարդանանց աղատադրական պատերազմի գնահատականը Յեղիշեյի մոտ: Յեղիշեյի կրոնական հայացքները: «Պատմության» գեղարվեստական առանձնահատկությունները, գեղարվեստի վիսպական շարադրում, սաղմի տեսարանների փայլուն նկարադրություններ: Յեղիշեյի հարգաբուլխ լիբիդմը, վոճի հետորական փայլը, պատմական անձնավորությունների գեղարվեստական կոնկրետացումը: Յեղիշեյի պատմությունն իբրև խոշոր կուլտուրական արժեք:

7. ՍԵՔՆՈՍ, ՀՈՎՀԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ, ՂԵՎՈՆԴ, ՀՈՎՀ. ԴՐԱՍԽԱՆԱԿԵՐՏՅԻ, ԹՈՄԱ ԱՐԾՐՈՒՆԻ ՅԵՎ ԱՅԼ ՊԱՏՄԻՉՆԵՐ

Տեղեկություններ Գ—Գ—րդ դարերի պատմիչների կենսագրության և ապրած ժամանակաշրջանի մասին: Հայ պատմիչների գրվածքները— կուլտուրական խոշոր արժեքներ: Գեղարվեստական վիսպական մասեր վերոհիշյալ պատմիչների գործի մեջ: «Տարոնի պատերազմը» ժողովրդական վեպը Հովհան Մամիկոնյանի մոտ: Արարների դեմ տարած հայ ժողովրդի հերոսական պայքարի արտացոլումն Ղեվոնդի, Հով. Դրասխանակերտցու և Թոմա Արծրունու գրվածքներում: Գեղեցիկ պատկերավոր նկարագրություններ Թոմա Արծրունու և մյուս պատմիչների գործերում: Աշխարհաբարի տարրերի յերևան դալն այս պատմիչների գործերում:

Հայկական կուլտուրայի ծաղկումը Գ—Գ—րդ դարերում: Ծարտարապետություն, յերաժշտություն և այլն:

## 1. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

### «ՍԱՍՈՆԵՑԻ ԴԱՎԻԹ» ԵՊՈՍԸ

«Սասունցի Դավիթ» հայ ժողովրդական մեծ եպոսի սկզբնավորումը և ձևավորումը 7—10-րդ դարերի ընթացքում: Արարական բռնակալական տիրապետության (7—10-րդ դարեր) և առհասարակ ոտար նվաճողների և կեղեքողների դեմ հայ ժողովրդի մղած հերոսական պայքարի զեղարվեստական խոր ընդհանրացումը «Սասունցի Դավիթ» եպոսում: Հայաստանի Կ(բ)ԿԿ Կոմիտեն «Սասունցի Դավիթ»-ի մասին, եպոսում «բացառիկ պայծառությամբ արտահայտված և ժողովրդի աղատասիրական վողին ու հերոսությունը, նրա պայքարն ոտարերկրյա նվաճողների դեմ»: Դեմոկրատիզմի և ժողովուրդների յեղբայրության դադափարները եպոսում: «Սասունցի Դավիթ»-ի ճյուղերը. Սանասարի և Բաղդասարի, Առյուծաձև Մհերի, Դավթի և Պատիկ Մհերի ճյուղերը: Դավթի ճյուղի ճոխությունը, զեղարվեստական կատարելությունն ու ամբողջականությունը: Դավիթը վորպես ժողովրդի հերոսականության մարմնացում: Եպոսի մյուս գործող անձերը. Չենով Ոհան, Քեռի Թորոս, Վերդո և ուրիշները: «Սասունցի Դավիթ»-ի զեղարվեստական բարձր արժանիքները. ժողովրդական ստեղծագործության զեղարվեստական առանձնահատկությունները: «Սասունցի Դավիթ»-ի բաղմաթիվ վարիանտների առաջ գալը և բանավոր կերպով մինչև մեր օրերը հասնելը: Դավթի և Մհերի ճյուղերի մշակումները մեր նոր դրականության մեջ (Հովհ. Թումանյան, Լ. Մանվելյան, Ա. Իսահակյան): «Սասունցի Դավիթ»-ը վորպես համամարդկային կուլտուրական արժեք:

## 2. ՎԻՊԱԿԱՆ ՅԵՐԳԵՐ, ՀԵՔԻԱԹՆԵՐ, ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՅԵՐԳԵՐ, ԱՌԱԾՆԵՐ ՅԵՎ ԱՍԱՑՎԱԾՆԵՐ, ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

Վիպական յերգերի պատմագրական աղբյուրները և զուգահեռներն այլ ժողովուրդների ֆոլկլորում: Վիպական յերգերի բովանդակությունն ու արվեստը. «Մոկաց Միրզա» և «Ասլան աղա»:

Հեքիաթի ծագումը: Հայ ժողովրդական հեքիաթների տեսակներն  
ու ժանրերը: Վերջիններիս թեմատիկան, կոմպոզիցիան ու վոճը:  
Միջազգային սյուժեներ ու մոտիվներ հայկական հեքիաթներում:  
Հայ ժողովրդական հեքիաթների սոցիալական Նյությունը: Աշխա-  
տավոր ժողովրդի իղձերի արձագանքը հեքիաթներում:

Հայ ժողովրդական յերգերի տարրեր տեսակները. բնության,  
աշխատանքի, ծխական, սիրո, պանդխտության և այլն: Այդ յեր-  
գերի արվեստը (տաղաչափությունը, սլատկերավորությունը և այլն):

Ժողովրդական առածի և ասացվածքի ժանրային բնութագիրը:  
Առածի և ասացվածքի ծագումն ու աղբյուրները: Հայ ժողովրդական  
առածների ու ասացվածքների բովանդակությունը (սոցիալական մո-  
տիվներ, կենցաղ, աշխատանք, փիլիսոփայություն և այլն):

Առածի ու ասացվածքի կառուցվածքն ու արվեստը:

Հանելուկի ժանրային բնութագիրը: Հայ ժողովրդական հանե-  
լուկների բովանդակությունն ու արվեստը (կառուցվածքը, հանդա-  
վորումը, մետաֆորներ):

Ժողովրդական բանահյուսության հավաքումը և ուսումնասի-  
րումը: Գ. Սրվանձտյանի խոշոր դերն այդ բնագավառում:

### 3. ՄԻՋԻՆ ԾՐՋԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՐՁԱԿԸ:

#### ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ (10-րդ դար)

Հայ բանաստեղծությունը մինչև Գրիգոր Նարեկացին: Այդ բա-  
նաստեղծության մեծ մասամբ յեկեղեցական արարողության հետ  
կապված լինելու հանդամանքը: Շարականներ: Հեթանոսական ժա-  
մանակների հետ կապված աշխարհիկ սլատկերների և եպիտեամների  
դոյությունը շարականների մեջ:

Կենսադրական տեղեկություններ Գրիգոր Նարեկացու մասին:  
Նարեկացու ապրած եպոխան: Գյուղացիական շարժումներ: Թոնդրա-  
կեցիներ, սրանց պայքարը Ֆեոդալականության և յեկեղեցու դեմ:  
Այդ շարժումների ազդեցությունը զեղարվեստական դրակա-  
նության մեջ: Նարեկացու ստեղծարարություններն ու սրանց  
յերկվությունը (աշխարհիկ մոտիվներ և միատիկա) վորպես այդ  
դարաչրճանի սոցիալ-քաղաքական հակասությունների արտացոլում:  
Նարեկացին վորպես միատիկ («Մատեան ողբերգութեան»): Նարեկա-  
ցու տաղերը. ժողովրդական բանահյուսության լայն ոգտադործումը:  
Նարեկացու տաղերի՝ փաստորեն աշխարհիկ ստեղծարարության մո-  
տենալը: Աշխարհիկ մոտիվների լայն ոգտադործումը նաև այդ եպո-

խայի ճարտարասլետութեան մեջ. Աղթամարա վանքը և այլն: Նարեկացու սրետական բարձր կուլտուրան— բաղմաղան չափեր, յերաժշտականութիւն, հարուստ և դունադեղ սրտիկերներ: Նարեկացու խոշոր դերը հայ բանաստեղծութեան զարգացման սլառութեան մեջ: Նրա՝ ազդեցութիւնը հետագա դրողների վրա: Մառը Նարեկացու մասին:

#### 4. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ (12-րդ դար)

Հայաստանում ստեղծված իրադրութիւնը 12-րդ դարում սեղ-ջուկների արշավանքից հետո: Վրաստանի ուժեղանալը և վրացական կուլտուրայի ծաղկումը (Ռուսթափելու Եսրխան): Կուլտուրական ուղախնների ստեղծվելը Հայաստանի արևելքում (Հաղպատ, Սանահին) և արևմուտքում՝ Կիլիկիան հայկական սլետութեան սահմաններում: Առաջին աշխարհիկ դրողներ. Հովհաննես Սարկավազ:

Կենսագրական տեղեկութիւններ Ներսես Շնորհալու մասին: Շնորհալու յեկեղեցական թեմատիկայով դրած բանաստեղծութիւններն ու սրեմները: դրանց բանաստեղծական ձևի միտրինակութիւնը: Շնորհալու հանելուկները (առակները) և «Ողբ Եդեսիոյ» սրեմը. սրանց արժեքը վորսլես աշխարհիկ թեմայով դրված առաջին դրական նմուշներ: Շնորհալու դերը մեր դրականութեան սլառութեան մեջ:

#### 5. ՄԵԻԹԱՐ ԳՈՇ (12-րդ դար)

Կենսագրական տեղեկութիւններ: Գոշի «Առակը»-ը: Առակները Հայաստանում մինչև Գոշը: Ժողովրդական բանահյուսութեան թեմաների լայն ոգտագործումը: Գոշի աշխարհայացքը: Քաղաքների բնակչութեան զանաղան խավերի կյանքի արտացոլումը Գոշի առակներում: Գոշի առակների դեղարվեստական արժանիքները: Գոշի «Իատաստանադիրքը» և նրա սլառական արժեքը:

#### 6. ՎԱՐԴԱՆ ԱՅԳԵԿՅԻ (13-րդ դար)

13-րդ դարից սկսած դրական լեզուն՝ փոխարինվում և միջին հայերենով: Յեկեղեցական բանաստեղծութեան նվաղումը և լճացումը: Առակախոսութեան, նովելների և աշխարհիկ վերիկայի զարգանալը: Հայաստանի արևելքի և արևմուտքի քաղաքական վիճակը թաթարների աիրապետութեան շրջանում. արևելքում՝ տնտե-

առևթյան քայքայում և կուլտուրական ոջախների ավերում, արև-  
մուտքում՝ կիլիկիայում, տնտեսական և կուլտուրական կյանքի աշ-  
խուժացում: Հայ վերածնության շրջանն ու այդ շրջանում ստեղծ-  
ված համաշխարհային կուլտուրական արժեքները. Վ. Բրյուսովը  
միջնադարյան հայ պոեզիայի մասին: Նկարչության (մանրանկարչու-  
թյուն) և ճարտարապետության դարդանալը աշխարհիկ գրականու-  
թյան հետ միասին: Այդ գրականության հակասքոլաստիկական բը-  
նույթը և լավատեսական կենսահայեցողությունը:

Կենսագրական տեղեկություններ Այդեկցու մասին: Նրա ապրած  
Եպոխան: Այդեկցին և Մխիթար Գոշը: Այդեկցուն վերագրված ա-  
ռակների, նովելների և անեկդոտների ժողովածուները: Վարդանի  
հեղինակության հարցը: Առակների, նովելների մեծ մասի հայ ժո-  
ղովրդական ստեղծագործություն լինելը: Յեզոպոսի և «Ֆիդիոլոգի»  
առակների թարգմանության հարցը: Առակները, նովելները  
և անեկդոտները — Ֆեոդալ իշխանավորների և կղերականության  
ու յեկեղեցու դեմ ուղղված սատիրան: Առակների և միջնադարյան  
արձակ գրականության մյուս նմուշների դեղարվեստական արժեքը:  
Առակների թեմաների ողտալործումը հայ նոր գրողների կողմից  
(Աբովյան, Թումանյան և ուրիշներ): Այդեկցու առակների տեղը հա-  
մաշխարհային առակախոսության և նովելիստական գրականության  
մեջ: Մասի խոշոր ծառայությունը Այդեկցու առակների ուսումնա-  
սիրության և հրատարակության դործում:

## 7. ՅԻԿ (13-րդ դար)

Կենսագրական տվյալներ Յրիկի մասին: Յրիկը վորպես աշխար-  
հիկ բանաստեղծության առաջին խոշոր ներկայացուցիչներից մեկը:  
Մոնղոլների տիրապետության շրջանի հայ աշխատավորության սո-  
ցիալական ծանր վիճակի արատացումը Յրիկի պոեզիայի մեջ: Յրի-  
կի դեմոկրատիզմը, նրա ցասումն ու ընդվզումն ոտար լծի և Ֆեո-  
դալական հասարակության սոցիալական անարդարությունների դեմ  
(«Գանդատ», «Ընդդեմ Փալաքին» և այլև): Յրիկի վոտանավորների  
պատկերավորությունը, սերտ կապը ժողովրդական բանահյուսու-  
թյան հետ: Յրիկը վորպես հին յեկեղեցական բանաստեղծության  
քարացած ձևերը խորտակող: Յրիկի կրոնա-բարոյական, խրատական  
վոտանավորները: Յրիկի ստեղծագործության սոցիալական և քաղա-  
քական սրությունը: Յրիկի աղղեցությունը հետագա հայ գրողների  
վրա:

Կենսադրական փաստեր: Յերզնկացին վորպէս սիրային լիրիկայի առաջին խոշոր ներկայացուցիչը: Խալարամիտ հողևորականությունից կրած նրա հալածանքները և աշխարհիկ բանաստեղծությունն ըստեղծելու համար մղած պայքարը: Նրա տատանումները կրօնական և աշխարհիկ ըմբռնումների միջև. աշխարհիկ տրամադրությունների հաղթանակը: Յերզնկացու՝ բնության և դարնան յերկերը, նրա պանթեիզմը: Յերզնկացու և հետագա բանաստեղծների սիրային և բնապաշտական պոեզիայի պրոդրեսսիվ նշանակությունը: Ժողովրդական բանահյուսության պատկերների լայն ողտադործումը Յերզնկացու կողմից: Նրա վոտանավորների կառուցվածքի բարձր տեխնիկան: Յերզնկացու դործած աղղեցությունը հետագա բանաստեղծների վրա: Յերզնկացին և իրանական պոեզիան:

9. ՄԿՐՏԻՉ ՆԱՂԱՇ (14—15-րդ դար)

Հայաստանի քաղաքական վիճակը 14—17-րդ դարերում: Կիլիկիայի հայկական պետության վերացումը: Թաթարների կայսրության քայքայումը. Հայաստանը նորից կռիվների թատերալայր: Պարսկաստանի և Ոսմանյան պետության միջև տեղի ունեցող կռիվները: Ժողովրդական մասսաների տնտեսական քայքայումը, պանդխտության ուժեղանալը:

Կենսադրական տեղեկություններ Մկրտիչ Նաղաշի մասին: Նաղաշը վորպէս սոցիալական թեմաներ շոշափող բանաստեղծ: Նրա և Ֆրիկի կապը: Պանդխտության ուժեղանալը Նաղաշի ապրած շրջանում և դրա պատմական պատճառները: Նաղաշի՝ դարերների կյանքն ու ապրուստները պատկերող վոտանավորները: Նրա սեպիզմը: Փողամուռ ու ազահ Ֆեոդալ իշխանների և յեկեղեցականների այլասերված բարքերի մերկացումը Նաղաշի կողմից: Նաղաշի դեմոկրատիզմը:

10. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹԼԿՈՒՐԱՆՑԻ ՅԵՎ ԳՐԻԳՈՐԻՍ ԱՂԹԱՄԱՐՑԻ

(15—16-րդ դար)

Կոստանդին Յերզնկացուց սկիզբ առած սիրո ու բնության թեմաները Թլկուրանցու և Այթամարցու ստեղծադործությունների մեջ: Սիրային լիրիկան վորպէս հակադրությունն Ֆեոդալական միստիկ-ճղնավորական հետադիմական աշխարհայեցողության: Աշխարհիկ կյանքի պաշտամունքը. յերջանկությունը յերկրի վրա և վոչ թե յերկնքում փնտոելը: Թլկուրանցու և Այթամարցու բաւոյա-խւտոտա-

կան վոտանավորները: Թլիւրանցու և Աղթամարցու ստեղծագործութեան զեղարվեստական արժեքը, նրանց թողած ազդեցութիւնը հետագա դրողների վրա: Թլիւրանցու և Աղթամարցու ստեղծագործութեան կապը իրանական պոեզիայի հետ:

### 11. ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒՉԱԿ (16-րդ դար)

Կենսագրական տեղեկութիւններ: Քուչակի ստեղծագործութեան և անձնավորութեան սրորելմը բանասիրութեան մեջ: Քուչակի ստեղծագործութեան ժողովրդայնութիւնը: Քուչակի հումանիզմը: Քուչակի քառյակների («հայրենների») զեղարվեստական կատարելութիւնը. չափի կանոնավորութիւն, միշտ որիդինալ պատկերներ, վառ յերանգավորում, մաքուր լեզու, սերտ կապ ժողովրդական բանահյուսութեան հետ: Թուամանյանը Քուչակի մասին: Քուչակը վորպես միջազգային մեծութիւն հանդիսացող հայ հանձարեղ բանաստեղծ: 16-րդ և 17-րդ դարերի այլ բանաստեղծներ—Ներսես, Մինաս Թոխաթցի, Հովասափ Սերաստացի, Ղաղար Սերաստացի, Դավիթ Սալաձորցի, Բաղդասար Դալիբ և այլն:

### 12. ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 16—18-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ

Հայ տպագրութեան սկիզբը 16-րդ դարում: Տպագրութեան կենտրոնները (Վենետիկ, Հռոմ, Ամստերդամ և այլն): Տպագրութեան նշանակութիւնը մեր կուլտուրայի զարգացման պատմութեան մեջ: Պատմադիրների դործերի և բառարանների հրատարակութիւնը: Տպագրված առաջին զեղարվեստական գրքեր. «Տաղարան», «Պղնձե քաղաքի պատմութիւն» և այլն: Հայ զեղարվեստական գրականութեան ձեռագիր հուշարձանների մեծ մասի անտիպ մնալը՝ մինչև 19-րդ դարը. դրա պատճառները:

### 13. ՀԱՅ ԱՇՈՒՂԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆԸ 17—18-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ. ՆԱՂԱՇ ՀՈՎՆԱԹԱՆ (17—18-րդ դար)

Հայ աշուղական բանաստեղծութեան զարգանալը Հայաստանի արևելքում՝ Զուղա, Աղուլիս, Նախիջևան և այլ քաղաքներում: Վրաստանը 18-րդ դարում, Թրիլիսի քաղաքը. հասարակական և կուլտուրական կյանքը Թրիլիսիում:

Կենսագրական փաստեր Նաղաշ Հովնաթանի մասին: Աւրած և պոխան: Հովնաթանը վորպես սիրո և ուրախութեան յերդիչ: Աշուղական բանաստեղծութեան չափական առանձնահատկութիւնները:

Հովնաթանի վտանավորների ճոխ պատկերները և յերաժշտականությունը: Հետամնացության և հողևորականության դեմ ուղղված Հովնաթանի սուր յերդիժական բանաստեղծությունները: Հովնաթանի դեմոկրատիզմը: Անդրկովկասի ժողովուրդների բանաստեղծական կուլտուրայի ոգտադործումը Նաղաչ Հովնաթանի կողմից: Հովնաթանյան ընտանիքը:

14. ՍՍՅԱԹ-ՆՈՎԱ. (18-րդ դար)

Սայաթ-Նովայի կյանքը, կրթությունը, արհեստը, միջավայրը: Նրա անվան ծաղումը: Սայաթ-Նովան վրաց արքունիքում: Արքունիքից վտարվելը: Սայաթ-Նովան— կուսակրոն Հաղսպատում: Այցելություններ Թբիլիսի: Աղա-Մահմեդ խանի արչավանքը և Սայաթ-Նովայի սղանությունը: Տարբեր կարծիքներ բանաստեղծի ծննդյան, կյանքի և սղանության վերաբերյալ:

Գ. Հախվելդյանի մեծ ծառայությունը Սայաթ-Նովայի յերդերի հրատարակության դործում. 1852 թվի հրատարակությունը Մոսկվայում: Սայաթ-Նովայի ձեռագիր ժառանգության վիճակը: Սայաթ-Նովան— Անդրկովկասյան ժողովուրդների յերդիչ: Վրացերեն յերդերի հրատարակությունը:

Սայաթ-Նովայի տեղը հայ դրականության պատմության մեջ: Սայաթ-Նովան վրաց և աղբրեջանական դրականության մեջ:

Դարաչրջանի քաղաքական, սոցիալական և կուլտուրական կացությունը: Կուլտուրայի միասնական վոճը: Արևելյան կլասիկ արվեստի տրադիցիաները Անդրկովկասում, մասնավորապես Թբիլիսիում: Սայաթ-Նովան և Արևելքի ժողովրդական բանահյուսությունը:

Մարդը և նրա հողեկան աշխարհի համապարփակ արտահայտությունը Սայաթ-Նովայի ստեղծադործության մեջ: Սայաթ-Նովայի հումանիզմն ու նրա նշանակությունը միջնադարյան սխոլաստիկայի դեմ մղվող պայքարում: Արվեստի կյությունն ըստ Սայաթ-Նովայի. արվեստը— ժողովրդին, արվեստագետը— «խալխի նոքար»: Սայաթ-Նովան իբրև սիրո յերդիչ: Նրա սիրո յերդերի համաշխարհային նշանակությունը:

Դարաչրջանը Սայաթ-Նովայի յերդերում: Սայաթ-Նովան և նրա ըմբոստացումը թաղավորի դեմ: Նրա խոր դժգոհությունը տիրող իրավակարգից:

Սայաթ-Նովայի բանաստեղծությունների չափը, յերաժշտականությունը, բաղմազանությունը միորինակության մեջ, ժողովրդական կենդանի լեզուն: Նրա պատկերների հատկությունները, նրա եսիտեաները և համեմատությունները: Պոլոնսկին, Մ. Նալբանդյանը, Հ.

Թումանյանը և Վ. Բրյուսովը Սայաթ-Նովայի մասին: Սայաթ-Նովայի դպրոցը: Շամչի Մեղքոն, նրա ստեղծագործություններն ու այդ ստեղծագործությունների արժանիքները: Սայաթ-Նովայի այլ հետեւորդները:

15. ՀՆԴԿԱՀԱՅԵՐՆ ՈՒ ՆՐԱՆՅ ԿՈՒԼՏՈՒՐԱՆ ՅԵՎ  
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: ՄԻՒԹԱՐՅԱՆՆԵՐ

Հայերը Հնդկաստանում: Նրանց վերաբնակման կենտրոններն ու գրադժուները: Մովսես Բաղրամյանն ու նրա «Նոր տետրակ որ կոչի Յորդորակ» (1772, Մազրաս) աշխատությունը: Լուսավորության կոչն այդ աշխատության մեջ: Հայ ժողովրդի ազատագրման կոչն ապրատամբության միջոցով: Բաղրամյանի լեզուն և վոճը:

Հակոբ Շահամիրյանն ու նրա «Գիրք անուանեալ Որոգայթ փառաց» (1773) աշխատությունը: Հանրապետական-դեմոկրատական դադափարների արծարծումն այս գրքում: Գրքի լեզուն: Հնդկահայ հրապարակախոսությունն ու նրա սերտ կապը լուսավորության դարի դեմոկրատական-հեղափոխական դադափարների հետ:

Հայ պարբերական մամուլի սկիզբը: Հարություն ք. Շմավոնյանն ու նրա հրատարակած «Սղղարար» ամսագիրը (1794) Մազրասում, Ամսադրի ազդային, տնտեսական, քաղաքական, դրական և հրապարակախոսական բաժինները: Ամսադրի տարածման ծավալը:

Հնդկահայ հրապարակախոսության և լրագրության խոշոր նշանակությունը հայ կուլտուրայի և դրականության պատմության համար:

Մխիթարյանները: Մխիթար Աբրատացի (1676—1740) ու Մխիթարյան միաբանության հիմնադրումը (1717): Մխիթարյանների գործունեությունը հայ տպագրության, բանասիրության և պատմագրության բնագավառում: Մխիթարյանների կրոնական-ուեակցիոն հայացքները: Մխիթարյանների բաժանումը յերկու մասի (Վենետիկ և Վիեննա): Չամչյանի ու Ինճիճյանի դրական-գիտական գործունեությունը: Մ. Նալբանդյանը Մխիթարյանների մասին:

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԻՆ

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 19-ՐԴ ԴԱՐԻ  
ԱՌԱՋԻՆ ԿԻՍՈՒՄ

ՔԱՂԱՔԱԿԱՆ - ԿՈՒՆՏՈՒՐԱԿԱՆ ԿՍՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ  
ՌՈՒՍԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԿՋԲՆԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Պարսկական տիրապետութիւնն ու նրա վախճանը Հայաստանում : Յերեանի դրախումբը (1827 թ.) : Նոր դարաշրջան հայ ժողովրդի կյանքում : Հայաստանն ինքնակալական Ռուսաստանի «մարդ» : Յարական կառավարութեան քաղաքականութիւնն ազնվականութեան ուժեղացման ու դյուղացիութեան ճորտական վիճակի խորացման ուղղութեամբ Անդրկովկասում : Շարժումներ ռուսական միապետութեան դեմ :

Տաճկա-Հայաստանի վիճակը : Սուլթանական ռեժիմը : Դեմոկրատական շարժումը սոցիալաճայերի մեջ :

Հայ ժողովրդի կուլտուրական վիճակն Անդրկովկասում և Տաճկաստանում (Պոլիս և դավառները) : Դպրոցական կենտրոններ— Մոսկովա (Լազարյան ճեմարան), Թբիլիսի (Ներսիսյան դպրոց) ու Պոլիս : Մուրադ-Ֆախրյանի դպրոց : Կուլտուրական շարժում Զմյուռնիայում . «Արշալույս Արարատյան» (1840) :

Ներսիսյան դպրոցի սաների դրական ալմանախը : Լազարյան ճեմարանի հրատարակութիւնները : Կլասիցիզմը և նրա մուտքը հայ դրականութեան մեջ ու առաջին քայլերը . Ռասինի «Գոթոլիա» վոդբերդութեան հայերեն թարգմանութիւնը : «Գոթոլիա»-ին կցված թարգմանչի՝ Սարգիս Տիգրանյանի՝ առաջաբանն իբրև կլասիցիզմի սկզբունքների և մանավանդ Բուալոյի բանաստեղծական կանոնադրքի պաշտպանութիւն : Արսեն Բաղրատունին իբրև հայկական կլասիցիզմի ամենաբնորոշ ներկայացուցիչ : «Հայկ դյուլցադնը» իբրև մեր կլասիցիզմի տիպիկ արտահայտութիւնը : Ֆրանսական կլասիցիզմի ներկայացուցիչների դործերը Բաղրատունու թարգմանութեամբ :

Բաղրատունին և Եղվարդ Հյուրմյուզը իբրև թարգմանիչներ :

Հոմերոսը, Վերգիլիոսը, Սոֆոկլեսը, Տակիտոսը (Տացիտը), Վոլ-  
տերը հայերեն: Այդ թարգմանությունների կուլտուրական խոշոր  
նշանակությունը. անտիկ աշխարհի և լուսավորության դարի դաղա-  
փարների ու դրական-դեղարվեստական արժանիքների տարածումը  
հայ իրականության մեջ: Թարգմանությունների լեզուն՝ դրաբարը:

Գրիբոյեդովը, Պուշկինը, Լերմոնտովը Անդրկովկասում և Հա-  
յաստանում: «Սելքից պատուհաս» կատակերգության առաջին բեմա-  
դրությունը Յերեանում: Պուշկինի ճանապարհորդությունն Երզրում  
(1829):

Ռուս գրողների մուտքը հայ դրականության մեջ: Լադարյան ճե-  
մարանի սաների առաջին ծանոթությունները ռուս գրողներին՝ 30-ա-  
կան թ. թ. (Մ. Եմին): Պուշկինը, Ժուկովսկին, Լերմոնտովը և  
մյուս ռուս բանաստեղծները 40-ական թ. թ. հայերեն (Համադաստ-  
յանի թարգմանությամբ): Այդ թարգմանությունների նշանակու-  
թյունը:

1180  
A  
30816  
II

1. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱԼԱՄԴԱՐՅԱՆ (1796—1834)  
ՅԵՎ ՄԵՍՐՈՒԹԱՂԱԳՅԱՆ (1803—1858)

Սլամդարյանի կյանքը, մանկավարժական գործունեյություն  
ու ստեղծագործությունը: Նրա պսևդիմայի աշխարհիկ մտախններն ու  
լեզուն: Սլամդարյանի լիբլիկայի մեղմությունն ու նրբությունը: Նրա  
նշանակությունը հայ դրականության պատմության մեջ:

Թաղիադյանի կյանքը: Թաղիադյանի պայքարը հայ հոգևորա-  
կանության դեմ: Թաղիադյանի ճանապարհորդություններն ու թա-  
փառումները: Թ-նը Հնդկաստանում: Թ-նի կապը հնդկահայ առաջա-  
վոր շարժման հետ: Մահը:

Թաղիադյանի դրական-դեղարվեստական յերկերը: Այդ յերկերի  
աշխարհիկ բնույթը: «Սոս և Սոնդիպի» (1847) — պսև՝ սիրս ամենա-  
կարողության մասին: «Վեպ Վարդգիսի» (1846) — արկածախնդրա-  
կան տիպի միտակ: Ժամանակակից կղերա-Ֆեոդալական կարգերի  
խիստ քննադատությունն այդ միտակում: «Վեպ Վարսենիան» (1847)  
— աշխատանքի և աշխատասիրության մեծարում: Փոլկլորի ողտա-  
գործում: Թաղիադյանի միտակներն կառուցվածքը, սյուժեն, դիա-  
լոգը: Թաղիադյանի յերկերի աշխարհիկ բնույթի և նրա դրաբար  
լեզվի հակասությունը: Կլասիցիզմի և ռոմանտիզմի արտահայտու-  
թյունները Թաղիադյանի յերկերում:

Թաղիադյանի բանաստեղծությունները («Յադադս աղխից»,  
«Թանաքաման»), Թաղիադյանի յերգիծանքը: Թաղիադյանը — Ժուռ-



նալիսա և մանկավարժ : Ժողովրդական լեզվի գործածութիւնը Թաղիադյանի մի քանի յերկերում («Կոչը», «Աղգասեր»-ը և այլն) : Խեալիզմի ժողովրդայնութեան տարրերը Թաղիադյանի գրված քնն-րում : Թաղիադյանի «Ճանապարհորդութիւն ի Հայս»-ը (1847) : Պարսկական բունակալ տերութեան և ուստական ճորտատիրական կարգերի քննադատութիւնն ու ժողովրդի կյանքի ճոխ նկարագրու-թիւնն այս գործի մեջ : «Ճանապարհորդութեան» գեղարվեստական բարձր արժանիքները :

Թաղիադյանը— Աբովյանի լուսավորական գործունեութեան համար հոգ պատրաստող :

## Չ. ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆ (1804—1848)

Աբովյանի կյանքը : Նրա արտակարգ ընդունակութիւններն ու իր կրթութիւնն ընդլայնելու բուն տենչանքը : Պարբոտը և Մասիսի դադաթ բարձրանալը : Ուսումնառութեան տարիները Դորպատում : Դորպատում ձեռք բերած կրթութիւնը : Աբովյանի մտավոր զարդացման ուղղութիւնը : Աբովյանի վերադարձը հայրենիք : Մանկավարժական գործունեութիւնը Թբիլիսիում և Յերևանում : Աբովյանի գրական-հասարակական միջավայրը Թբիլիսիում : Աբովյանի կապը Միրզա-Շաֆու և Ախունդովի հետ : Եջմիածնի, մասնա-վորապէս Ներսէս Ծ-րդի, բացասական վերաբերմունքը և սլայքարը Աբովյանի դեմ : Աբովյանի կոնֆլիկտը կղերա-չինովնիկական միջ-ավայրի հետ : Աբովյանի վողբերգական կորուստը : Այդ կորստեան շուրջը յեղած կարծիքները :

«Վերք Հայաստանի»-ն, նրա գրելու (1840) և տպագրելու (1858) պատմութիւնը : «Վերք Հայաստանի»-ի իդեական բովանդա-կութեան առանցքը . վառ հայրենասիրութեան, հայրենիքի հերոսա-կան պաշտպանութեան և ժողովրդի վերածննդի դադափարները : Ազատու կերպարը : Ազատին— այդ դադափարների, պարսկական բռնակալ տիրապետութեան դեմ հայ ժողովրդի մղած պայքարի ու խանական իշխանութեան հանդեպ տածած նրա սուր ատելութեան մարմնավորում : Աբովյանի սերը և բարեկամական վերաբերմունքը գեպի դրացի աղբրեջանցի («յերլինները» — տեղացիները) և քուրդ-ժողովուրդները :

Հայաստանի նվաճումը ուստական պետութեան կողմից և Աբովյանի գրական վերաբերմունքը գեպի այդ պատմական իրադրութիւնը :

Պանթեիզմը Աբովյանի յերկերում իբրև հակադրութիւն միջ-նադարեան սխոլաստիկային :

Աբովյանը հայ նոր գրականութեան հիմնադիր : Աշխարհաբար

գրականութիւնը մինչև Արովյանը. այդ գրականութեան շմաստ-  
յականանալու պատճառները: «Վերք Հայաստանի»-ի «Հառաջաբա-  
նը» իբրև լուսավորական գործունեութեան մի ամբողջ ծրագիր:  
Արովյանի պայքարը դրաբարի տիրասպետութեան դեմ հանուն ժողո-  
վրդական լեզվի և վերջնիս հաղթանակը նրա յերկերում: Արովյանի  
լեզուն ու նրա հիմքը— արարատյան բարբառը: Արարատյան բար-  
բառը գրական լեզվի նախադրյալ:

Արովյանի վոճը, ոտմանտիղմի և ունալիղմի տարրերն Արովյանի  
ստեղծագործութեան մեջ: Ժողովրդական բանահյուսութեանն իբրև  
Արովյանի ստեղծագործութեան հիմնական արձատներից մեկը:  
Արովյանի ստեղծագործութեանը վորպես կլասիցիղմի լիակատար  
հաղթահարում:

«Վերք»-ի գեղարվեստական հատկութիւնները. կառուցվածքը,  
նկարագրութիւնները (մասնավորապես՝ բնութեան, Յերեանի քեր-  
դի), ախպարումը, համեմատութիւնները, էպիտետները, դրանց ա-  
ռատութիւնը և կուտակումը, նախադասութիւնների շարահյուսու-  
թիւնը: Արովյանի հանդալոր արձակը: «Վերք Հայաստանի»-ի եմո-  
ցիոնալ հաղեցվածութիւնը: Արովյանի այլ գործերը: Արովյանը  
վորպես առակադիր—«Պարապ վախտի խաղալիք»: «Հառաջաբանի» դե-  
մոկրատական սկզբունքները, այդ վրքի ժողովրդայնութիւնն ու  
սերտ կապը ժողովրդական բանահյուսութեան հետ: «Թուրքի աղջիկը»  
և «Հաղարիեշա». կովկասյան ժողովուրդների յեղբայրութեան դա-  
դափարն այդ վրվածքներում. «Թուրքի աղջիկ» պատմվածքի գեղար-  
վեստական արժանիքները— ճոխ լեզու, պատկերավորութիւն, լի-  
րիկա: Արովյանի «Ֆետորա» դրաման:

Արովյանը բանահավաք: Արովյանը— մանկական գրող:

Արովյանի մանկավարժական գործերը. «Նախաշավիղ»-ը և նրա  
տղադրութեան պատմութիւնը:

Արովյանը և ուսու գրականութիւնը:

Արովյանի ժողովրդասիրութիւնը և ժողովրդայնութիւնը:

Արովյանը— լուսավորիչ: Արովյանը ցարիղմի թշնամի:

Արովյանի անտիպ յերկերը:

Արովյանի բացառիկ նշանակութիւնը հետագա ամբողջ հայ գը-  
րականութեան զարգացման համար:

### 3. ԱՇՈՒՂԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Աղբար Ադամի, Միսկին Բուրջու, Շիրինի, Նիրանու, Թուրինջի  
ստեղծագործութիւնները: Սայաթ-Նովայի ուժեղ ազդեցութիւնը:  
Ստեղծագործութեան հիմնական մտիւնները: Յումորը և իշխող  
կարգերի քննադատութիւնը Աղբար Ադամի և Շիրինի մոտ:

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 19-ՐԴ ԳԱՐԻ  
50—60—70-ԱԿԱՆ Թ. Թ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ-ԿՈՒՆՏՈՒՐԱԿԱՆ ԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ  
ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

«ՀՅՈՒՍԻՍԱՓԱՅԼ»-Ը

Ղրիմի պատերազմը (1853—1855) : Ճորտատիրական Ռուսաստանի պարտությունն այդ պատերազմում : Ռուս ռազմոչին հեղափոխական ինտելիգենցիան, նրա սլայքարն ինքնակալության և ճորտատիրական կարգերի դեմ՝ գյուղացիության ազատագրման համար : «Современник» ամսագիրը : Նրա դերը և նշանակությունը հայ դեմոկրատական ինտելիգենցիայի քաղաքական սլայքարում և գրական-հրատարակատեղական գործունեություն մեջ : Գյուղացիական ռեֆորմը և նրա դնահատականը ռուս և հայ հեղափոխական դեմոկրատների կողմից : Գյուղացիական ռեֆորմի բնույթն Անդրկովկասում և Հայաստանում : Գյուղացիական ասպտամբությունները Վրաստանում և Հայաստանում (Չանդեղուր, Բայազետ) : Կապիտալիստական հարաբերությունների զարգացումն Անդրկովկասում : Գյուղացիության և արհեստավորության շերտավորումը : Գ. Ախվերդյան և Պ. Շանչյան : Համաքրական շարժումը Թբիլիսիում (1865) :

Հայ լրագրության առաջ գալն Անդրկովկասում : «Արարատ» շաբաթաթերթը : Ժուռնալիստիկայի զարգացումը : Կուլտուրական կենտրոններ— Մոսկվա, Թբիլիսի : Գորսկատի դերը :

«Հյուսիսսասիայլ»-ը (1858—1864) և նրա ժամանակի հայ լրագրությունը—կղերական «Ճռաքաղ»-ը և «Մասյաց Աղալինի»-ն : «Մեղու Հայաստանի» : «Մրժիվ Վասպուրականի» : «Կուռնի Հայց ախարհին» : Ռուսթալիլին ու ռուս և յեվրոպական լուսավորիչներն այս ամսագրում : Գրական լեզվի կազմավորման հետևյալ՝ Արսիյանին հաջորդող ետապը : «Հյուսիսսասիայլ»-ի սլայքարը կղերականության ու կղերա-սլահասանողական բանակի դեմ՝ հանուն նոր լեզվի : «Հյուսիսսասիայլ»-ը և նրա դերը հայ գրականության ու կուլտուրայի արամություն մեջ : Նրա առաջադրած հիմնական լուսավորական սլրորբլեմները : Ս. Նազարյանի հրատարակատությունը : «Հյուսիսսասիայլ»-ի թարգմանական գրականությունը : Ս. Նազարյանի, Գ. Բարխուդարյանի, Մ. Սաղաթյանի և ուրիշների թարգմանությունները Գյոթեից, Շիլլերից, Կտրամզինից, Պուշկինից, Լերմոնտովից :

Լերմոնտովի «Դև»-ի Սաղաթյանի թարգմանության նշանակութիւնը հայ գրական լեզվի մշակման դործում:

Թարգմանական գրականության կարևոր նշանակութիւնը հայ ինքնուրույն գրականության զարգացման համար:

Հասարակական հարաբերութիւններն արևմտահայերի մեջ: Կուլտուրական կենտրոն— Կ. Պոլիս: Արևմտահայ յերիտասարդութիւնը Յեվրոսայի կուլտուրական կենտրոններում: 1848 թ. հեղափոխութիւնն ու նրա ազդեցութիւնը արևմտահայ դեմոկրատական ինտելիգենցիայի վրա: Գ. Ռայանի, Ն. Ռուսինյանի, Ս. Վասիկանի և Հ. Սվաճյանի գրական-հասարակական դործունեյութիւնը: «Մասիս», «Մեղու», «Արևելք» և «Արևմուտք» պարբերականները: «Ազգային սահմանադրութիւնը»: Գյուղացիական ազատագրական ապրտամբութիւնները (Ձեյթուն):

Ռոմանտիզմի և ռեալիզմի պայքարն այդ ժամանակաշրջանի հայ գրականության մեջ: Ռոմանտիզմի ներկայացուցիչները՝ Շահազիզ, Ալիշան, Պեշիկթաշլյան: Պատկանյանի ռեալիզմը և ռոմանտիզմը: Մ. Նալբանդյանի պայքարը ռոմանտիզմի դեմ՝ հանուն ռեալիստական գրականության: Պոռչյանի, Աղայանի, Պարոնյանի և Սուեդուկյանի ստեղծագործութիւններն իբրև ռեալիզմի հաղթանակայաշրջանում:

### 1. ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ (1829—1866)

Ռուս մեծ լուսավորիչների դործունեյութիւնը. Բելինսկու, Չերնիշևսկու, Դորրոյլյուբովի հետևողական պայքարն ինքնակալության ու ճորտատիրության դեմ հանուն գյուղացիության ազատագրման ու լուսավորության: Ծոյերբախյան մատերիալիզմ, ուտոպիական սոցիալիզմ:

Նալբանդյանի կյանքը: Նրա պայքարը Նոր-Նախիջևանում կղերական-աղայական ռեակցիայի դեմ: Նալբանդյանի ուսումնառութիւնը Մոսկվայում և Պետերբուրգում: Նալբանդյանի ճանապարհորդութիւնները Յեվրոսայ և Հնդկաստան ու դրանց նպատակը: Նալբանդյանի կապը ռուս հեղափոխական եմիգրանտներ՝ Գերցենի, Ռդարյովի և Բակունինի հետ: Չերնիշևսկին և Նալբանդյանը: Նալբանդյանը— ռուսական միապետության դեմ պայքարող հեղափոխական: Հայ ժողովրդի ազատագրման կապակցումը ռուս ժողովրդի ազատագրման հետ: Բանտարկումը Պետրոսպոլիսի ամբոցում, աքսորը և մահը:

Նալբանդյանը— հրապարակախոս: Նալբանդյանը «Հյուսիսափայլ»-ի եղբրում: Պայքար ընդդեմ յեկեղեցու և ռեակցիոն-պահպա-

նողական խալերի՝ հանուն նոր լեզվի, դպրոցի, դիտութեան և կուլ-  
տուրայի: «Յերկու տող»-ը (1861) և «Յերկրագործութեանը» (1862):  
Ֆեոդալիզմի, ուսական ճարտարական միապետութեան և բուր-  
ժուական իրավակարգի արմատական քննադատութեանն ու ժխտու-  
մը: Պայքար լիբերալիզմի դեմ: Սոցիալ-քաղաքական հարցերի լուծ-  
ման քարոզը դյուղացիական հեղափոխութեան ճանապարհով: Նալ-  
բանդյանի մատերիալիզմը, դիալեկտիկան, աթեիզմը և ուտոպիզմը:  
Նալբանդյանը— հեղափոխական դեմոկրատ: Նալբանդյանը հայ հե-  
ղափոխական դեմոկրատական շարժման ղեկավար: Սվաճյանը և իջ  
«Մեղու»-ն ու Նալբանդյանը:

Նալբանդյանը քննադատ: Կրիտիկա «Սոս և Վարդիթեր»-ի մա-  
սին: Բեկինսկու, Չերնըշեվսկու և Դոբրոլյուբովի գրականագիտական  
սկզբունքների փայլուն կիրառումն այդ կրիտիկայում: Նալբանդյանի  
մտքի լայնութեանն ու խորութեանը, եսթետիկական հոտառութեան-  
նը և նուրբ ճաշակը: Նալբանդյանը— ունակ լիբերալիզմի ու ժողովրդայնու-  
թեան շատագույ: Նալբանդյանը հայ դիտական-քննադատական մտքի  
հիմնադիր:

Նալբանդյանի բանաստեղծութեաններն ու արձակ յերկերը: Նալ-  
բանդյանի քաղաքացիական պոեզիայի բարձր մորակը: Նալբանդյանի  
պոեզիան ու Բերանժեն, Հայնեն, Պուշկինը, Լերմոնտովը, Ուարյո-  
վը: Այդ պոեզիայի սերտ կապը Նալբանդյանի հրապարակախոսական-  
քննադատական գործունեութեան հետ: «Ազատն Աստված» բանաս-  
տեղծութեանը: Նալբանդյանի «Հիշատակարանները» և «Մեռելա-  
հարցուկը»: Նալբանդյանի քննադատական ունակ լիբերալիզմն ու յերգիծանքը:  
Նալբանդյանի գրական դպրոցը: Գ. Տեր-Հովհաննիսյանի «Տեր Սար-  
գիսը», Սուլթան Շահի «Հայոց ազգի լուսավորիչը»:

Նալբանդյանի լեզուն ու նրա տարբերութեանը մի կողմից Ա-  
բովյանի, մյուս կողմից Նալբանդյանի լեզվից:

Աբովյանը և Նալբանդյանը: Նալբանդյանը— Աբովյանից հետո—  
հետևյալ բարձր ետապը հայ հասարակական մտքի զարգացման: Նալ-  
բանդյանը— լուսավորիչ: Նալբանդյանի ազդեցութեանը հետագա  
հայ գրականութեան վրա:

## 2. ՍՄԲԱՏ ՇԱՀԱԳԻԶ (1841—1907)

Կենսագրական տեղեկութեաններ: Ուսումնառութեանը Լազար-  
յան ճեմարանում: Մանկավարժական գործունեութեանը նույն ճե-  
մարանում: Մահը:

Բանաստեղծությունների առաջին ժողովածուն «Ազատության ժամեր» (1862): Շահաղիղն իբրև հայ նոր պոեզիայի սկզբնավորողներից մեկը: Պուշկինի, Բերանժեյի, Բայրոնի աղղեցությունը: «Современник» ամսագրի նշանակությունը Ս. Շահաղիղի աշխարհայացքի և պոեզիայի զարգացման համար: Գործըլյուրով:

Շահաղիղը «Հյուսիսավայլ»-ի եջերում: Գրական-դադափարական միջավայր: Նալբանդյան:

«Լեոնի վիշտը» պոեմը և բանաստեղծությունների դիրքը (1865): «Լեոնի վիշտը» — առաջին լիբիկական պոեմը հայ նոր դրականության մեջ: Հայ իրականության քննադատությունը պոեմում — ախրող դասակարգի և ինտելիգենցիայի, յերկրի կուլտուրական հետամնացության, շինականի ստրկության և աղքատության պատկերումը պոեմում: Աղբային վերանորոգման կոչ: Շահաղիղի լուսավորչական հայացքները: Հայ դեմոկրատիայի (Նալբանդյանի և ուրիշների) վերաբերմունքը դեպի «Լեոնի վիշտը»: Յարական բյուրոկրատիան և «Լեոնի վիշտը»: Պոեմի կառուցվածքը, պատկերները: Պոեմի լեզվի գրքային տարրերը: Լիբիկական, եպիկական և նկարագրական տարրերը պոեմում: Լեոնի կերպարը: Նրա վարչափոփ սխեմատիկ լինելը: Յեփրոպայի աղղային-աղատադրական շարժումների աղղեցությունը Շահաղիղի վրա: Լերմոնտովի և Նեկրասովի աղղեցությունը: Քաղաքացիական պոեզիայի սկզբունքը Շահաղիղի ստեղծագործության մեջ: Շահաղիղի սիրային լիբիկան և լեզուն: Շահաղիղի ուսմանտիղմը:

Շահաղիղի հետադա գործունեյությունը. «Հրապարակախոս ճայն» «Ամառնային նամակներ»: Նրա եփուլուցիան դեպի լիբերալիզմը:

### 3. Գ. ԴՈՂՈՒՅԱՆ (1830—1908)

Գ. Դողոխյանի պոեզիան. քաղաքացիական մտախիճներ և լիբիզմ «Օրծեւնակ»-ը և մյուս հայրենասիրական բանաստեղծությունները. Դողոխյանի յերգիծանքը: Դողոխյանի կարևոր նշանակությունը հայ նոր պոեզիայի պատմության մեջ: Դողոխյանի յերկերի հրատարակումը վրացական համալսարանի կողմից:

### 4. ՌԱՓԱՅԵԼ ՊԱՏԿԱՆՅԱՆ (1830—1892)

Կենսագրական տեղեկություններ: Պատկանյանը Լաղարյան ճեմարանում և Դորպատում: Կրած աղղեցությունները:

Պատկանյանի մուտքը դրականության մեջ «Արարատ» թերթում:

(«Շինականի յերգը») : Պատկանյանի ստեղծագործութեան բազմաժան-  
րութեանը— վոտանավորներ, պոեմներ, վեպեր, պատմվածքներ,  
գրամաներ և այլն : Պատկանյանը և ցարական ցենզուրան :

Պատկանյանի պոեզիայի հիմնական դժերը : Պատկանյանի պոե-  
զիայի ունակութեան զիջը . սատիրական բանաստեղծութեաններ—  
«Մայրաքաղաքում կրթված հայ յերիտասարդը», «Մայրաքաղաքում  
կրթված հայ որիորդը», «Անվնաս մարդը» և այլն : Շահամուլ հայ  
բուրժուազիայի և նրա մտավորականութեան մերկացումն այդ  
գրվածքներում : Դեմոկրատական խավերի կյանքի ունակութեան ար-  
տացույցումը . «Մշակը», «Քյորոզլին» և այլն :

Ռուսական դեմոկրատական պոեզիան և Պատկանյանի ունակութեան-  
սատիրական բանաստեղծութեանները :

Պատկանյանի պոեզիայի ուսմանտիկական զիջը . դյուղացիական  
կյանքի իդեալականացումը . շինականի յերգեր . հայոց պատմութեան  
վորոշ շրջանների և դեմքերի միակողմանի, տենդենցիոզ դերադնա-  
հատումը : Ազգային ազատագրական շարժման ու բուրժուական ազ-  
գայնականութեան դադալարները նրա յերգերում :

Պատկանյանի ուսմանտիզմը և ազգայնական աշխարհայացքը :  
«Հայկական հարցը» և այդ կատակցութեամբ Պատկանյանի ազգայ-  
նականութեան ուժեղացումը 70-ական թ . թ . : Պատկանյանի ազգայ-  
նական գործերի ոգտագործումը հետադայում՝ հայ բուրժուազիայի  
կողմից :

Նալբանդյանի պայքարը Պատկանյանի ազգայնականութեան դեմ :

Պատկանյանի դեղարվեստական արձակը . շահամուլ հայ բուր-  
ժուազիայի, հողեւորականութեան և ցարիզմի ունակութեան քննա-  
դատութեանը Պատկանյանի արձակ յերկերում . («Փառասեր», «Տի-  
կին և նաժիշտ») : Ալթմազովի տիպը : «Նոր-Նախիջևանցոց քնարը» և  
բարբառով գրված նովելներն ու Ֆելյետոնները : Պատկանյանի յեր-  
գիծանքի յեղանակները : Նատուրալիստական մոմենտներ նրա յերգի-  
ծանքի և լեզվի մեջ :

Պատկանյանին իբրև մանկական բանաստեղծ . նրա գերը ստեղծա-  
գործութեան այդ բնագավառում :

Պատկանյանի ստեղծագործութեան նշանակութեանը մեր դրակա-  
նութեան գարգացման պատմութեան մեջ :

## 5. ՂԵՎՈՆԻ ԱԼԻՇԱՆ (1820—1901)

Կենսագրական տեղեկութեաններ : Ալիշանի անցումը կլասիցիշ-  
մից ուսմանտիզմին . Ալիշանը— հայ ուսմանտիկական իբրիկայի սկզբ-  
նավորողներից մեկը : Ալիշանի լեզուն— գրարար և աշխարհարար :

Միջնադարյան աշխարհիկ գրողների վաճի ոգտագործում: Հայրենա-  
սիրական ու ժողովրդասիրական մոտիվները Ալիշանի յերգերում: Ա-  
լիշանի պատմական պոեմները: Բանաստեղծի կղերական-պահպանո-  
ղական աշխարհայացքը և նրա անդրադարձումը գեղարվեստական յեր-  
կերի մեջ: Ալիշանի կարվածությունը հայրենի ժողովրդից և նրա ըս-  
տեղծագործության վերջ վերացականությունը: Ալիշանի աղղեցու-  
թյունը հետագա հայ գրողների վրա:

Ալիշանը վորպես հայագետ գիտնական:

## ՄԿՐՏԻՉ ՊԵՇԻԿՈՒԱՇԼՅԱՆ (1829—1868)

Կենսագրական տեղեկություններ: Մ. Պեշիկթաշլյանը— Ալիշանի  
աշակերտ. Պեշիկթաշլյանի ուսմանախղճը. նոր մոտիվներ նրա պոե-  
զիայում. սիրո և բնության յերգեր. Պեշիկթաշլյանի քաղաքացիական  
պոեզիան. աղղային աղատագրության կոչի յերգեր: Պեշիկթաշլյանի  
տաղաչափական արվեստն ու լեզուն: Պեշիկթաշլյանը— դրամատուրգ  
(առաջին աշխարհարար դրամաներ):

## 6. ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐՅԱՆ (1851—1872)

Կյանքը: Չարքաշ մանկությունը: Դուրյանի ուսումնառությունը:  
Հակոբ Պարոնյանը Դուրյանի ուսուցիչ: Ավարտական քննություննե-  
րը ճեմարանում և նվիրական ընծան— Լամարթինի գիրքը: Դուրյա-  
նի կյանքի նյութական անասղահովությունը. գրագիր՝ սարաֆի մոտ,  
թարգմանիչ՝ Վարդիկ պեյի մոտ, գերասանություն: Հիվանդություն  
և մահ:

Դուրյանի լիրիկան իրրև կյասիցիզմի պոեզիայի վերջնական  
հաղթահարման պատմական արտահայտություն: Դուրյանի և Պեշիկ-  
թաշլյանի միջև յեղած տարբերությունները:

Դուրյանի տաղերի հիմնական մոտիվները՝ սեր, բնություն,  
բողոք կյանքի անարդարության դեմ, մահ և այլն: Դուրյանի թախ-  
ծի սոցիալական արմատները: Դուրյանն իրրև ամիրայական միջա-  
վայրի դոճ: «Տրատունջը»-ը— խոսված հողու ուժգին բողոքի հան-  
ճարեղ արտահայտություն:

Դուրյանի տաղերի նորր ու կերթ լեզուն, խոր հուզականու-  
թյունը, սրտկերների կենդանությունը: Դուրյանը—խոչորագույն  
լիրիկ և հայ նոր քնարերգության հիմնադիր:

Դուրյանի դրամաները:

Կյանքը: Ուսումնասիրությունը դյուղում: Հանդիպում Խ. Արովյանի հետ: Պոռչյանը Ներսիսյան դպրոցի աշակերտ: Պ. Շանչյան: Հիմնավոր ծանոթություն Սրարատյան դաշտի դյուղական իրականությունից: «Վերք Հայաստանի»-ի ընթերցանությունից ստացած խոր տպավորությունը: Թատերական գործունեությունը: Որիորդաց դրսերոցների հիմնադրում Թբիլիսիում, Շուշում, Աղուլիսում: Պոռչյանի չարքաչ կյանքը: Պոռչյանը յուսանկարիչ: Պոռչյանը թեմական տեսուչ: Պոռչյանը Ներսիսյան դպրոցում: Հորեկյանը: Մահը:

«Սոս և Վարդիթեր»-ը (1860): Ժողովրդական կյանքի ճշմարտացի նկարագրությունը վեպում: Սոսը, Վարդիթերը, Տիրանը: Գյուղացիական ըմբոստացման առաջին ներկայացուցիչները (Վայկուն): Պոռչյանի կապը Թաղիադյանի հետ: Վեպի սիրային առանցքը ու նրա առնչությունը սիրային հեքիաթների հետ: Ժողովրդական արտահայտությունների, ասացվածքների լայն ոգտագործումը: Վեպի հյուսվածքի, այն և՛ արձակի և չափածոյի իրար հաջորդող վախարինման՝ ֆոլկլորային ծագումը: Վեպի լեզուն (բարբառ):

«Հացի խնդիր»-ը (1880): Գյուղացիության ռազմա-Ֆեոդալական շահագործումը 50—60-ական թ. թ. ու նրա ռեալիստական մանրամասն նկարագրությունը վեպում: Միկիտան Սաքոյի տիպը: Միկիտան Սաքոն իբրև հայ գրականության խոշոր սինթեզներից մեկը, վաշխառուական շահագործողի վերջնամասնավորված համայնապարփակ տիպ: Միկիտան Սաքոյի կենդանի նախատիպը (Սարգիս ք. Բղնունի): Պոռչյանի ստեղծագործական մեթոդի հիմնական հատկանիշներից մեկը: Վեպի այլ գործող անձինքը: Պոռչյանի առաջադիմությունը վեպի կառուցվածքի, լեզվի, սյուժետային դժի զարգացման ասպարիղում:

«Յեցեր»-ը (1889): «Բղդե»-ն (1890) և «Հունո»-ն (1900): Գյուղացիության ծայրահեղ շահագործման հետագա ետապի (70—80-ական թ. թ.), նրա դայրույթի և իր ճնշողների դեմ մղած պայքարի անդրադարձումը Պոռչյանի այս վեպերում: Բալասան աղայի, Խուրդոյի, Տաճատ Գնթունու ու Բղդեյի տիպերը մի կողմից, Հունոյի և Սիսակի տիպերը մյուս կողմից: Հունոն և Արղումանն ու Քյորոզլին:

Այս վեպերի կառուցվածքային թևերությունները:

Պոռչյանի ստեղծագործության ժողովրդայնությունը և ռեալիզմը: Պոռչյանի պահպանողական աշխարհայացքի և նրա ստեղծագործական մեթոդի հակասությունները. բռնակալների մերկացում և նահապետական կենցաղի վերջ իդեալականացում, նատուրալիստական

տարրեր: Պոռչյանի կապը Սրուվյանի հետ: Մ. Նալբանդյանը Պոռչյանի մասին: Պոռչյանն իրրե մեմուարիստ («Հուշիկներ»):

## Տ. ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆ (1840—1911)

Կյանքը: Ուսումնառությունը դյուղում: Ներսիսյան դպրոցի աշակերտ: Թափառաչըջիկ կյանքը: Աղայանը դրաչար: Աղայանը Մոսկվայում և Պետերբուրգում: 60-ական թվերի դաղափարները վորդեգրելը, հանդիպում Մ. Նալբանդյանի հետ, շիտմներ ուսու, լեհ և հայ ուսանողության հետ, ինքնակրթություն: Աղայանն Եջմիածնում: Ուսուցչական աշխատանք Ախալցխայում, Ալեքսանդրապոլում, Շուշում: Աղայանը— մայրենի լեզվի դասադրքերի հեղինակ: Աղայանի ձերբակալումը և արսորը: Աղայանի անասրահով կյանքը: Հորեյանը: Մահը:

«Արություն և Մանվել»-ը (1867): Արությունը և նրա հակադրվելը շրջապատին: Նահապետական հետամնացության, նախապաշարումների, ցարական չինովնիկների քննադատությունն Արությունի կողմից և նրա արծարծած լուսավորական ծրագիրը: Արությունի դժգոհությունն իրականությունից ու բողոքի նրա յուրահատուկ ձևը: Հերոսական հայրենասիրության մեծարումը: «Արություն և Մանվել»-ի անմիջական կապը «Վերք Հայաստանի»-ի հետ: Վեպի լեզուն առաջին և յերկրորդ տպագրություններում, կառուցվածքը:

«Յերկու քույր»-ը (1872): Վաչխատունների, ազնվականների ու ցարական պաշտոնյաների դեմ դյուղում մղած պայքարի անդրադարձումը վեպում: Ճաղարանց Թաթոեն ու Արղումանը: «Քյորոդլին» պատմվածաչարը: Քյորոդլու դյուղացիական սրտերադմի կոչը: Քյորոդլու անմիջական կապը Արղումանի հետ, Արղումանի կապը Արությունի հետ: Աղայանի ապստամբության ու միապետության տապալման կոչը «Թեմական տեսուչ» (1881) ակնարկում:

«Տորք Անգեղը» և հեքիաթները: Տորքի առնչությունը Քյորոդլու, Արղումանի և Արությունի հետ: Տորքը իրրե մարդու իդեալ. Աղայանի Տորքը և եպոսի Դուվիթը: «Տորք-Անգեղ»-ի դեղարվեստական բարձր արժանիքները. վառ յերեակրայություն, տողերի թարմություն, սյուժետային դժի անսայթաք ընթացք: Աշխատանքի մեծարումը «Անահիտ»-ում. «Անահիտ»-ի կառուցվածքը: «Արեգնահան»-ի ոստիմիդը. առնչությունը «Հաղարան բլրուլ»-ի հետ. Աղայանի սերտ կապը ժողովրդական բանահյուսության հետ: Աղայանի հեքիաթների կիրթ ու մաքուր լեզուն: Աղայանի աշխարհայաց-



մեկ գոհ» — Ինչպիսի հարձակում ընտանեկան-հասարակական կյանքի  
ուսակցիոն հիմքերի վրա: Պիեսի գեղարվեստական արժանիքները:

«Պեսո» (1871) — Սունդուկյանի և հայ դրամատուրգիայի սակեղ-  
ծագործութեան գագաթը: «Պեսո»-ն սոցիալական կատակերգու-  
թյուն: Գարաշրջանի սոցիալական հակամարտութեան արտացոլումը  
պիեսում: Պիեսի քաղաքական սրութեանը: Աշխատավորական ըն-  
տանիքի ու արդար վաստակի մեծարումը պիեսում: Արհեստավորը,  
համայր, կինսոն — իբրև մարդու իսկական տիպարներ: Պեսո, Կա-  
կուլի, Կեկեկ, Գիքո, Շուշան: Չիմղիմովի և Եփեմիայի տիպերի  
վերլուծումը: Չիմղիմովի սունչութեանը Չամբախովի հետ: Բուրժու-  
ական ընտանիքի ալլասերված բարբերի մերկացումը «Պեսո»-յում:  
Սունդուկյանի դրամատուրգիական կարողութունների լրիվ հայ-  
տարերումը «Պեսո»-յում. տիպերի ճշմարտութեան, դրամատիկ-  
մի աստիճանական զարգացում, լեզվի հարստութեան: «Պեսո»-ն —  
ուսակցիոնական դրամայի հաղթանակ: «Պեսո»-ն հայ ու վրաց թատ-  
րոններում: Գորկու կարծիքը «Պեսո»-յի մասին և նրա խոշոր աշ-  
խատանքը «Պեսո»-յի Տերյանի ուսուերեն թարգմանութեան վրա:

«Քանդված ոջախ» (1873): Իրականութեան արտացոլումը պիե-  
սում: Տիպեր. Ոսեփ, Սախո, Գիժ-Մողի, Նատո, Սալոմե, Մարմա-  
րով, Փարսիզ, Գարչո, Միքո: Դրամատիկ, կենցաղի դունադեդ  
նկարագրութեան, լեզվի տիպականութեան:

Սունդուկյանի արձակը. Համալի և Հաղիղի մասլահաթները,  
«Վարինկի վեչերը»: Բուրժուական աշխարհի դեմ ուղղված ծաղրը  
մասլահաթներում: Իրականութեան հակասութեանների պատկերումը  
«Վարինկի վեչեր»-ում. պատմվածքի գեղարվեստական բարձր ար-  
ժանիքները: «Սմուսիններ»-ը: Սունդուկյանի վերջին պիեսները.  
«Սեր և աղատութեան», «Քաղերսի բոխչան», «Կտակ»:

Սունդուկյանի սակեղծագործութեան նշանակութեանը հարևան  
ժողովուրդների գրականութեանների համար: Սունդուկյանի քննա-  
դատական ուսակցիոնը: Սունդուկյանի լեզուն, Թբիլիսիի բարբառը:  
Սունդուկյանի յերդիժանքի բնույթը: Սունդուկյան — Մոլիեր, Գոգոլ  
և Ռաստրիսկի: Ռուսական առաջավոր դրամատուրգիան, թատրոնը և  
Սունդուկյանը: Սունդուկյանը հայ ազգային մեծ դրամատուրգ և  
ուսակցիոնական կատակերգութեան հիմնադիր: Սունդուկյանի թատ-  
րոնը: Գ. Զմչկյան, Մ. Ամերիկյան, Ա. Մանդլինյան, Տեր-Գալթյան,  
Գուլազյան, Համիկ, Ավետ Ավետիսյան:

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 19-ՐԴ ԳԱՐԻ  
80 - 90-ԱԿԱՆ Թ. Թ.

ՌՈՒՍ-ՏԱՃԿԱԿ ԱՆ ՊՍՏԵՐԱԶՄԸ: ՌԵԱԿՏԻԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ ՅԵՆ  
ԹՅՈՒՐՔԻԱՅՈՒՄ: «ՄՇԱԿ»-Ը ՅԵՎ «ՄՈՒՐՃ»-Ը

«Մշակ»-ի հիմնադրումը (1872), Գր. Արծրունի: «Մեղու Հայաստանի»-ն և «Նոր Դար»-ը: Դրանց հակամարտությունը «Մշակ»-ի հետ: Ռուս-տաճկական պատերազմը (1877—78): «Հայկական հարցը»: «Փորձ»-ը և «Արձագանք»-ը:

Ռեակցիան Ռուսաստանում: Յարիզմի ռուսացման քաղաքականությունը: Աղղաջին ճնշումը Հայաստանում ու նրա աստիճանական ուժեղացումը: Յարակալ կառավարության հայաժանքները հայկական կուլտուրայի դեմ: Հայկական դպրոցների փակումը: Գյուղացիության ծանր վիճակը. Ժողովրդական մասսաների դժգոհությունն ու ապստամբությունները ցարական կառավարության դեմ (1883 և 1887 թ. թ.):

Ռեակցիան Թուրքահայաստանում. Համիդյան ռեժիմի խստությունները: Տաճկական գրաքննության դաժանությունները: Հայ թատրոնի արգելումը: Պոլսահայ դեմոկրատական խավերի սպառնալիքային և հոգևորականության դեմ: Գյուղացիական ապստամբությունները. Թուրքահայաստանում՝ սուլթանի դեմ (80-ական թ. թ.):

Արդյունաբերության աճումն Անդրկովկասում: Գյուղացիության և արհեստավորության անտեսական քայքայման խորացումն ու պրոլետարականացումը: Դասակարգային նոր հարաբերություններ: Բանվոր դասակարգի առաջացումը: Բանվորության վայրագ շահագործումը:

Դաշնակցական ու Հնչակյան նացիոնալիստական կուսակցությունների առաջացումն ու նրանց հակաժողովրդական-արկածախնդիր քաղաքականությունը:

«Մուրճ»-ը և նրա դերը հայ գրականության պատմության մեջ: «Մուրճ»-ի բանաստեղծները: Լ. Մանվելյանի գրական գործունեությունը: «Մասունցի Դավիթ» կառույցի մշակումը: Վ. Միրաքյանի ըստեղծագործությունը: «Լարվարի վորսը» պոեմը. պոեմի տիպերը, լեզուն, պատկերները, կառուցվածքը: Պոեմի նշանակությունը հայ գրականության մեջ: Արևմտահայ մամուլ. «Մասիսը» և «Արևելք»: Էմին Տեր-Գրիգորյանի պիեսները:

Ազգայնական ուժանտիղժի դարգացումը Պատկանյանից հետո  
առանձնապես զեղի բնագավառում— Բաֆֆի: Ռեալիստական գրա-  
կանության դարգացման նոր ետապը: Պայքար ուժանտիղժի դեմ այս  
ետապում: Ռեալիզմի ծաղկումը: Շիրվանդադեյի և Պարոնյանի  
ստեղծագործություններն իբրև ռեալիստական ուղղության բարձրա-  
գույն արտահայտություններ:

Նոր դրական լեզվի կայունացումն այս շրջանում:

### 1. ՀԱԿՈՅ ՊԱՐՈՆՅԱՆ (1842—1892)

Կյանքը: Ռուսումնասիրությունը Ադրիանուպոլսի հայկական և հու-  
նական դպրոցներում: Պարոնյանը Պոլսում փոստային ծառայող,  
պատրիարքարանի դրաղիր, ուսուցիչ: Մուտքը դրականության մեջ  
(«Արևելյան ատամնարույժ»): Պարոնյանը՝ «Փող առավոտյան»,  
«Մեղու», «Թոտրոն», «Զերկրադունդ» և «Խիլար» պարբերականնե-  
րի խմբագիր: Պարոնյանի շարքաչ կյանքը: Մահը:

Պարոնյանը վոբալես հայ խոշորագույն յերդիծարան: Կապիտա-  
լիստական պետությունների, սուլթանական ու ցարական բռնակա-  
լությունների դիվանագիտության մեջ թաղավորող կեղծիքի և փոքր  
աղգություններին ստրկացնելու քաղաքականության մերկացումը  
(«Հոսհոսի ձեռատետրը», «Միծաղ», «Կամիթներ» և այլն):

Բուրժուական-նացիոնալիստական և կղերական գործիչների հա-  
կաժողովրդական գործունեությունից մերկացումը: «Ազգային ջոջեր»:  
Չամուրճյանի, Նար-Պեյի և այլոց յերդիծական պորտրետները, Պա-  
րոնյանի սարկազմը:

Բուրժուական հասարակական հարաբերությունների, բուրժուա-  
գիայի զանազան խավերի կենցաղի, բնտանեկան ապականված բար-  
քերի, հողևորականության, ինտելիգենցիայի յերդիծական պատկեր-  
ները («Մեծապատիվ մուրացիաններ», «Առանին տեսարաններ» և  
այլն): Արխոդոմ աղայի և Բաղդասար աղբոր պորտրետները: Պարո-  
նյանի ստեղծագործության բովանդակության հարստությունը և խո-  
րությունը: Պարոնյանի ռեալիզմը: Պարոնյանի դեմոկրատիզմը և  
ստեղծագործության ժողովրդայնությունը: Նրա գաղափարական կա-  
պը Նալբանդյանի հետ: Պարոնյանը՝ հայ ժողովրդի ազատության  
գաղափարի ամենաջերմ պաշտպան:

Պարոնյանի կիրառած դրական ժանրերը—յերդիծական նովելներ,  
կատակերգություն և այլն: Պարոնյանի յերդիծական յեղանակները.  
կոմիկական դրություններ, սուր և փայլուն աֆորիզմներ և այլն:  
Համաշխարհային կյասիկ յերդիծաչանություն կուլտուրայի (Արխո-

տոՓան, Մոլիեր) հաջող ուղտազործումը Պարոնյանի կողմից: Պարոնյանի խոշոր նավատորական դերը մեր նոր աշխարհարար գրականության զարգացման պատմության մեջ:

Պարոնյանի թողած ազդեցությունը հետագա հայ յերդիծարանների վրա: Պարոնյանն իրրե քննադատ. նրա ժխտական վերաբերմունքը դեպի ոսմանախիլ-ազդայնական գրականությունը:

Պարոնյանի յերդիծանքի միջազդային արժեքը: Պարոնյանը վարպես համաշխարհային յերդիծարանության հանճարեղ դեմքերից մեկը:

## 2. ԾԵՐԵՆՑ— ՀՈՎՍԵՓ ՇԻՇՄԱՆՅԱՆ (1822—1888)

Ուսումնասությունը Մխիթարյանների մոտ. մանկավարժական գործունեությունը Կ. Պոլսում և ապա Փարիզում (Մուրադյան վարժարան). ուսանող Փարիզի համալսարանի բժշկական ֆակուլտետի: Հասարակական գործունեությունը Պոլսում: Ծերենցը Թրիչխիում և մանկավարժական գործունեությունը Ներսիսյան դպրոցում:

Ծերենցի պատմական վեպերը— «Յերկունք Թ. դարու», «Թեոդորոս Ռչտունի» և «Թորոս Լեվոնի»:

Ծերենցը վարպես պատմավիպագիր: Հայ ժողովրդի ազատադրական պայքարը արարական ախրապետության դեմ Գ-րդ դարում և դրա արասահայտությունը Ծերենցի «Յերկունք»-ում: Խուժեցի Հովհաննի՝ ժողովրդական հերոսի ախար: Ծերենցի իդեալիստական անհատապաշտական պատմահայեցողությունը: Ծերենցի պատմական վեպերի արժանիքներն ու թերությունները: Նրա դերը մեր գրականության պատմության մեջ իրրե առաջին պատմավիպագիր:

## 3. ՄՐԲՈՒՀԻ ՏՅՈՒՍԱԲ (1842—1901)

Կյանքը: Արևմտահայ վիպագրությունը Ծերենցից հետո: Կենցաղային, բարքադրական վեպի հաջորդելը պատմական վեպին: Տյուսարի «Մայտա» վեպը (1883) և նրա շուրջը բորբոքված բանավեճը— Հակ. Պարոնյանն այդ վեպի մասին: Տյուսարի մյուս վեպերը— «Սիրանուշ» (1885) և «Արաքսիա» (1887): Կանանց հարցը Տյուսարի վեպում:

Ս. Տյուսարի ոսմանախիլմը. վեպերի լեզուն, վոճը, կոմպոզիցիան, հանդույցների անսպասելի լուծումը. ախարի սխեմատիզմը— Արաքսիա և տիկին Արգարյան («Արաքսիա»), Մայտա և Հերիզ («Մայտա»):

Ս. Տյուսարի կրած դրական ազդեցությունների խնդիրը (Ժ. Զանդ):

Բաֆֆու հյանքը: Ուսումնառությունը Թբիլիսիի գիմնազիա-  
 շում: Բաֆֆու ճանապարհորդությունները, մանկավարժական դոր-  
 ծունեությունը: Մուտքը դրականության մեջ. «Արծիւ վասպուրա-  
 կանի»: Բաֆֆին և «Հյուսիսափայլ»-ը: Միք. Նալբանդյանի ազդե-  
 ցությունը Բաֆֆու վրա: Ղեկավար մասնակցություն «Մշակ» թեր-  
 թի հիմնադրմանը: Բաֆֆին «Մշակ»-ի և ջերում՝ 1872—1878 և 1878-  
 1884 թ. թ.: Պատակասուս Գր. Արծրունու հետ: Աշխատակցություն  
 «Փորձ»-ին և «Արձագանք»-ին: Մահը:

Բաֆֆին 1850—60-ական թ. թ. — «Սալբի» վեպը: Վեպի «Հա-  
 ոաջարանի» իրական դեբը: Վեպի հակաֆեոդալական կողմը:  
 Ռուստամի և Սալբու կերպարները: Պատմվածքներ Պարսկաստանի  
 հայ դյուղացիությունից: Բաֆֆին—բանաստեղծ: Քաղաքա-  
 ցիական մտախիչներ: Ազգայնական-պահպանողական տարրը բանաս-  
 տեղծություններում: «Փունջ»-ի արձակ յերկերը. «Հարեմ» վեպը:  
 Վեպի հակաֆեոդալական, ազատագրական իդեան. վեպի գեղար-  
 վեստական հատկությունները. նկարագրություններ և կոլորիտ:

Բաֆֆին «Մշակ»-ի և ջերում 1872 թվից մինչև ուսում-թյուրքա-  
 կան պատերազմը: «Ճանապարհորդություններ»: Պատմվածքներ  
 դյուղացիական կյանքից: Ռեալիզմը Բաֆֆու «Չահրումար», «Սաչա-  
 գողի հիշատակարանը» և «Վոսկի աքաղաղ» վեպերում: Ճանճուր Իվա-  
 նիչի, քալոր Պետրոսի և Պետրոս Մասիսյանի հասարակ անուն դար-  
 ձած տիպերը: Հայ առևտրա-վաշխառուական շահամուլ, «մուսլ» բուր-  
 ժուազիայի մերկացումներն այս վեպերում: «Մշակ»-ի ուղղության  
 հարցերի գեղարվեստական մեկնարանությունները: Այս վեպերի ճա-  
 նաչողական ընդհանուր նշանակությունը: Բաֆֆին «լուսավոր կապի-  
 տալիզմի» անհրաժեշտությունն ընդունող:

Բաֆֆին ուսում-թյուրքական պատերազմի տարիներին: «Հայկական  
 հարցը»: «Մշակ»-ի ազգայնական դիրքավորումը պատերազմի հարցե-  
 րում: Հայերի արտակարգ քաղաքակրթական միտան Արևելքում՝ լուս  
 «Մշակ»-ի: Հայաստանի ազատագրությունից հարցը սուլթանիզմի լր-  
 ծից: Այդ դադափարների պրոպագանդան Բաֆֆու «Չալալեղդին»,  
 «Խենթ» և «Կայծեր» վեպերում: Բաֆֆու այդ վեպերի ոտմանտիզմը:  
 Փարհաղի, Գուղուկչյանի, Վարդանի, Կարոյի, Ասլանի, Ավոյի կեր-  
 պարները: Այդ կերպարների ոտմանտիկական բնույթը: Փաթթահ-բե-  
 կը, Թոմաս Եֆենդին և ֆեոդալական բռնակալության այլ ներկայա-  
 ցուցիչներն այս գրվածքներում: Հակասություններ: Ապագայի Հայաս-

տանը «Կայծեր»—ուժ— բուրժուական Հայաստան: Ֆարական բանակի սպառազործման հարցը «Սենթ» վեպում: «Չալալեղինի», «Սենթի», «Կայծերի» եջերում արտահայտված ազգայնական ուժեղ տարրը: Վերջինս սպառազործումը և խորացումը հետազայում ազգայնական-բուրժուական կուսակցությունների կողմից:

Բաֆֆին 1880-ական թվականներին քաղաքական ուսակցիան Ռուսաստանում և Թյուրքիայում: Պատմական թեմատիկա: Բաֆֆու պատմավիպական աշխատություններ— «Դավիթ բեկ», «Պարույր Հայկազն», «Սամվել»: Ճարտասիրական վրաստանը, բռնակալական Թյուրքիան և Պարսկաստանը «Դավիթ-բեկ» վեպում: Մելիք-Դավիթ և Մելիք-Ֆրանգյուլ դավաճանների կերպարները: Դավիթ-բեկյան ապրտամբությունը և նրա գաղափարախոսության բնութագիրը: Հայրենիքի և պետականության վերականգնման գաղափարը: Դավիթ-բեկի կերպարը: Վրացի գրական կերպարները— Թամարը և Սիկոն: Վրաց ազնվականության առաջավոր մասի թերազնահատումը:

«Պարույր Հայկազն»-ի լուսավորական կողմը: «Սամվելը»— Բաֆֆու գեղարվեստականի ամենարարձր արտահայտությունը: Բաֆֆին— ստար բոյոր բռնակալությունների թշնամի: Պատմական վեպերը— սեակցիայի դեմ: Սամվելի, Մուշեղ Մամիկոնյանի, Վահան Մամիկոնյանի, Մեհրուժանի և Շապուհի կերպարները: Սամվելը— հայրենասեր: Վորժիլդուխտի վարպետներն կերտված կերպարը:

«Մաս-փուչ»: Սոցիալական ապստամբության սրբոյեմն այս սրտամբվածքում:

Բաֆֆու տեղը հայ գրականության պատմության մեջ: Պատմավեպի խոչոր վարպետ: Հայ գրական լեզվի զարգացումը Բաֆֆու ստեղծագործության մեջ: Բաֆֆին և հին հունական գրականությունը, Բաֆֆին և Ֆրանսական գրականությունը: Բաֆֆին և ռուս գրականությունը:

## 5. ԵԻՐՎԱՆՁԱԻՆ (1858—1935)

Կյանքը: Ուսումնառությունը Շամախում: Դատարանի գրագիր՝ Բադվում, գրապահ՝ Բադվի Մարդասիրական Ընկերության գրադարանում: Այս պաշտոնի նշանակությունը Շիրվանդաղեյի մտավոր գարգացման համար: Շիրվանդաղեն Թբիլիսիում, արտասահմանում: Շիրվանդաղեն խորհրդային որերում: «Մորզանի խնամին»: Հորելյանը: Շիրվանդաղեն ժողովրդական գրող: Մահը:

Շիրվանդաղեյի գրական գործունեյության սկիզբը: Նրա առա-

Հին գեղարվեստական յերկը՝ «Հրդեհ նավթագործարանում» (1883) : Սոցիալական նոր փոխհարաբերությունների արտացոլումն այդ գործում . կապիտալիստի կերպարը— Իվան Գրիգորիչ Մարությանց . բանվորների սպառնալուծը . բանվոր դասակարգի ծանր կացությունը . «Գործակատարի հիշատակարանից» վիպակը : Բուրժուազիայի մերկացումն այս վիպակում : «Խնամատարը» :

«Նամուս»-ը (1885) և «Ցավաղար»-ը (1897) : Գալափոսական քաղաքի հետամնացության ու տղիտության , նահապետական կենցաղի բացասական գծերի , միջնադարից ժառանգած վայրենի նախապաշարմունքների անդրադարձումն այս վիպակներում : Բարխուդարի , Սոնայի , Գիթ Գանիկի , Սեյրանի , Սուսանի , Հայրապետի տիպերը :

Շիրվանղաղեյի ստեղծագործական կարողությունների զարդացման հետևյալ ետապը . Շիրվանղաղեն մեծ վեպերի հեղինակ : «Արսեն Դիմաքսյան» (1893) : Դիմաքսյանի կերպարը : Բուրժուական եղուցենտրիկ ինտելիգենտի , բուրժուական մարդասիրության և բարեգործության ուժեղ ծաղրը «Արսեն Դիմաքսյան»-ի մեջ : Վեպում արժարժաժ հասարակական-ընտանեկան սրբրլեմները : Վեպի աղամարդ և կին գործող անձերը : Բարաթյանի հոր կենդանի տիպադրումը :

«Քառս» (1898) : Արդյունաբերական Բաղվի , հայ բուրժուազիայի զեղիս կյանքի ու բուրժուական ալլանդակ ընտանիքի նկարագրություններն ու մերկացումը «Քառս»-ում : Սմբատ , Միքայել և Արշակ Ալիմյանները : Ալիմյան հոր վարպետ տիպադրումը : Մարությանյանի և նրա կնոջ՝ Մարթայի տիպերը : Տարուեր աղգելի բանվորները յեղբայրական համերաշխության անդրադարձումը վեպում : Բանվորների կերպարները՝ Կարապետ , Ռասուլ , Իվան : Հայ կյանքի աննախընթաց լայն սպառնալուծումը վեպում : Հեղինակի հասուն տարիների դիտողությունների ու փորձի ողտագործումը : «Քառս»-ի քննադատական ռեալիզմը : Հայ վեպի զարգացման հիմնական ետապներն ու «Քառս»-ն իբրև այդ զարգացման բարձրակետը : «Քառս»-ն առաջին խոշոր ռեալիստական վեպը Ռուսաստանում արդյունաբերական բուրժուազիայի մասին :

«Վարդան Ահրումյան» անավարտ վեպը . այդ վեպի գեղարվեստական խոշոր արժանիքները :

Շիրվանղաղեն— գրամատուրդ : «Պատվի համար» (1905) : Դրամայի թեմատիկայի ու նրա մեջ արժարժված պրոբլեմների հարակցությունը «Քառս»-ին : Ելիզրարովը , Սաղաթելը , Մարդարիտը , Ռթարյանը և մնացյալ տիպերը : «Պատվի համար»-ի դրամատիկական արժանիքները . գործողությունների բնական առաջընթացում , աշխուժ դիալոգ , հաջողված տիպեր : «Յեվգինե» և «Արմենուհի» դրա-

ժաները: Շիրվանղաղեն— հայ գրամատուրգիայի հետևյալ ետապը  
Կունդուկյանից հետո: Շիրվանղաղեյի թատրոնը. Հ. Արեւյան:

Շիրվանղաղեն և 1905 թվի հեղափոխությունը: Յարիզմի մեր-  
կացումը «Ջհուղի ականջ» պատմվածքում:

Շիրվանղաղեն— մեծուարիատ. «Կյանքի բովից»: Շիրվանղաղեյի  
նովելները:

Շիրվանղաղեյի արձակի առանձնահատկությունները: «Արախատը»  
իրբև այդ արձակի լավագույն նմուշներից մեկը: «Արախատ»—ում  
հայտնաբերված նկարադրական հմտությունը, կյանքի խոր ճանաչո-  
ղությունը, վարպետ տիպադրումը: Շիրվանղաղեյի լեզուն: Շիրվան-  
ղաղեյի կրած ազդեցությունը յեվրոպական և ուրև կլասիկներից—  
Տոլստոյ, Բալզակ, Ֆլորբեր, Չոլա:

Շիրվանղաղեն կապիտալիստական ֆորմացիայի նկարիչ ու հայ-  
կական ու ալիստական արձակի ամենամեծ ներկայացուցիչներից մե-  
կը: Նրա ստեղծագործության կարևոր նշանակությունը ԽՍՀՄի ժո-  
ղովուրդների համար:

## 6. Ա. ԱՐՓԻԱՐՅԱՆ (1850—1908)

Կյանքը: Վենետիկի Մուրադ-Ռաֆայելյան դպրոցում: Աշխա-  
տակցությունը «Մշակ»-ին՝ Հայկաի ստորագրությամբ: Աշխատակ-  
ցություն «Մասիս»-ին և «Արևելք»-ին:

Արևմտահայ ու ալիստական արձակի առաջացումը 1880-ական  
թ. թ. յերկրորդ կեսին:

Արփիարյանի բանակուլիը Գր. Ռոյանի հետ՝ ու ալիզմի և ու-  
ճանալիզմի շուրջը: Ա. Արփիարյանը վորպես գրական ու ալիզմի տե-  
սարան: Նրա ու ալիստական նովելները— «Նորավեպը», «Յարալի մը  
գինը», «Դատապարտյալը», «Կատակ մը»: Պոլսահայ բուրժուական  
չնտանիքի բարքերի պատկերում այդ նովելներում:

Ա. Արփիարյանի նովելների գեղարվեստական արժանիքները—  
սեղմ, զուսպ ու պատկերավոր վոճը, կուռ կոմպոզիցիան: Նացիոնա-  
լիզմի արտահայտությունները Արփիարյանի ստեղծագործություննե-  
րի մեջ:

## 7. ՄՈՒՐԱՑԱՆ (1854—1908)

Կյանքը: Ուսումնառությունը Շուշում: Աշխատակցությունը «Նոր  
Դար»-ին: Ստեղծագործության անբարենպաստ պայմանները: Մու-  
րացանը հաշվապահ սմբողջ կյանքում: Հիվանդությունն ու մահը:

կյանքի բաղձակողմանի ճանաչողությունը Մուրացանի յերկե-  
րում: Հայ գյուղի հակասական իրականության արտացոլումը,  
գյուղի բուրժուազիան, տղետ ու մռայլ հողևորականությունը, ցա-  
րական պաշտոնյաները, գառարանը, բռնությունն աշխատավոր  
գյուղացիության վրա, հողադրկությունը, քաղաքական իրավադր-  
կությունը, կուլտուրական ծայրահեղ հեռամնացությունը:

«Սորհրդավոր միանձնուհի» (1889): Քաղաքի և գյուղի իրակա-  
նությունն այս գրվածքում: Գյուղի «փրկության» մանր-բուրժուա-  
կան ուտոպիստական ծրագիրն իբրև պատասխան իրականության  
հակասությունների: Միանձնուհու կերպարը. նրա բնավորության  
ճարդկային դժերը, նվիրվածությունը ժողովրդին, անձնադոհու-  
թյունը: Միանձնուհին իբրև առաջին զաղափարական հայ կինը գրա-  
կանության մեջ:

«Նոյի ազոավը» (1899): Վեդունց Սարգսի կերպարը: Բուրժուա-  
կան ինտելիգենցիայի քննադատությունը: Այս գրվածքի դրական  
արժանիքները. անկեղծություն, հրապարակախոսական ուժղնու-  
թյուն, կառուցվածքի պարզություն, տիպերի վորոշակիություն,  
կենցաղի վառ պատկերը, գավառաբարբառի կենդանությունը:

«Առաքյալ» (1902): Գյուղի իրականության ճանաչողության խո-  
րացումը: Գյուղական միջավայրն իր կոնկրետ տվյալներով. Չիբուխ-  
լու, Սևան: Գյուղական կուլակների և հողևորականների տիպեր:  
Բուրժուական լիբերալ ինտելիգենցիայի վերաբերմունքը դեպի իրա-  
կանության յերևույթները: Կամսարյանի տիպը: Նրա դասակարգա-  
յին էություն մերկացումը: Սատիրական և նկարագրական տարրերն  
«Առաքյալ»-ում: Մուրացանի ունակիցը:

«Լուսավորության կենտրոնը» (1892—93): Իրականության ծա-  
վալուն ընդդրկումը վեպում: Քաղաքի պատկերը: Բուրժուազիայի,  
ազնվականության և նացիոնալիստական կուսակցությունների ու  
ինտելիգենցիայի սպանիչ ծաղրը: Տիպեր, Սարյան, Մոմձյան, Շաչ-  
յան և այլն: Վեպում նկարագրված «Նոր դասակարգի» պայքարն  
ընդդեմ բուրժուազիայի. Սարյանի դերն այդ պայքարում: Մուրա-  
ցանի սատիրայի քաղաքական բացահայտ սրությունը: Ռուս նարոդ-  
նիկական գրականության ազդեցությունը Մուրացանի ստեղծագոր-  
ծության վրա:

Պատմական անցյալը Մուրացանի ստեղծագործության մեջ. «Գե-  
վորդ Մարդպետունի». արար նվաճողների դեմ հայ ժողովրդի մղած  
պայքարի նկարագրությունն այս վեպում: Հեղինակի պատմական ի-  
գեալխոստական կոնցեպցիան այս վեպում: «Ռուզան». այս դրամայի

ուժանախի բնույթը: Պահպանողական ազգայնականության տարրերը  
Մուրացանի աշխարհայացքում:

Մուրացանը հայ վիպասանության խոշորագույն գեմքերից մեկը:

### Տ. ԳՅՈՒՂԱԳԻՐՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Աղապյանի, Աղելյանի, Նիկոլ Մամիկոնյանի, Ճուղուրյանի,  
Սանդալի, Ա. Շահնազարյանի, Բարկենցի, Զավախեցու, Մալխա-  
սյանի, Թլկատինցու սանդաղործությունները:

Գյուղազիր դրականության ուժեղ հոսանքը 19-րդ դարի վերջերին  
և 20-րդ դարի սկզբներին: Գյուղազիր հեղինակների մուտքը դրակա-  
նության մեջ. հայ պարբերական մամուլի դերը («Մուրճ», Նոր-  
Դար», «Լուսա» և այլն): Առանձին հրատարակություններ. գյուղա-  
զիր հեղինակների խորհրդային հրատարակությունները:

Հայ գյուղազիր հարուստ դրականության առաջացման պատմա-  
կան-սոցիալական պատճառները: Միասնությունը, առևտրական  
կապիտալը և կուլակը հայ գյուղում: Կարևոր տեղաշարժեր գյու-  
ղական իրականության մեջ: Տնտեսական-սոցիալական նոր յերևույթ-  
ներ. սոցիալական շերտավորման խորացումը և դասակարգային պայ-  
քարի սրումը գյուղում: Գյուղական նյրոլետարիատը: Գյուղացիական  
դանդաղների հարաբերությունները բուրժուական քաղաքի և նրա  
«ասլականված» կուլտուրայի հետ: Գյուղացու վերաբերմունքը գեպի  
մտավորականությունը:

Հայ գյուղի տնտեսական-սոցիալական և քաղաքական կյանքի  
արտացոլումը մեր գյուղազիր դրականության մեջ: Այս դրականու-  
թյան սոցիալական ու պատմական ճանաչողական նշանակությունը:  
Կուլակության, միասնությունից և «գյուղական պայենական բնաշ-  
խարհի» քայքայման ուսույթատական նկարագրությունը գյուղազիր  
հեղինակների յերկերում. կուլակների, պաշտոնյաների և շքավոր  
ու միջակ գյուղացու տիպերի շարքը. դրանց գեղարվեստական ար-  
ժանիքները. հայ շարքաչ գեղջկուհին, գալրոցը, կենցաղը, բարքերը  
և սովորույթային իրավունքի պատկերացումը:

Պանդխտություն գեպի կապիտալիստական քաղաք. քաղաքի ա-  
նասելի շահագործման տիպավորումը մեր գյուղազիրների կողմից:  
Դարձ քաղաքից գեպի գյուղ. գյուղազիրների բացասական վերաբեր-  
մունքը կապիտալիզմի նկատմամբ: Դասակարգային պայքարի արտա-  
հայտությունները գյուղազիրական յերկերում. շքավոր գյուղացիու-  
թյան բմբոստացման տիպավորումը կուլակության և քաղաքական  
իշխանության գեմ. այդ բմբոստացումների եպիգրոպիկ-տարբերային

բնույթը: Գյուղապետների «փրկչական» ծրագիրը. դրանց լուսավորական եյությունը:

Պոմյալովսկու, Գլեր-Ֆլեսպենսկու, Զլատովրատսկու և մյուս ռազնոչին-դեմոկրատ ռուս գրողների ազդեցությունը: Նմանություններ և տարբերություններ ռուս և հայ գյուղապետ դրականությունների միջև: Տարբերություններ հայ գյուղապետների միջև:

Ժողովրդական բանահյուսության հարստությունները հայ գյուղապետ դրականության մեջ. այս դրականության ազդադրական խոշոր նշանակութիւնը: Գյուղապետ դրականության ռեալիզմը, բազմազանությունը, նրա ժողովրդական լեզուն: Այդ դրականության սերակապը Աբովյանի, Պոռչյանի, Աղայանի, Մուրացանի և Փափաղյանի հետ: Հայ գյուղապետ դրականության դեղարվեստական թերությունները:

### 9. ՆԱՐ-ԴՈՍ (1867—1933)

Կյանքը: Ուսումնասիրությունն արհեստավորաց դպրոցում: Ընկերություն Մատուրյանի հետ: Աշխատանքը «Նար-Դոս»-ում: Ստեղծագործության անբարենպաստ պայմանները. Նար-Դոսը սրբազրիչ յերկար տարիների ընթացքում: Նար-Դոսը խորհրդային որերում: Հորեկյանը: Նար-Դոսը ժողովրդական գրող: Մահը:

«Մեր թաղը»: Արհեստավորության քայքայումն ու խավարի, աղքատության, նախապաշարումների, արբեցողության և կնոջ իրավազրկության պատկերն այս պատմվածաչարում: Խուլ բողոք ախրող քաղաքական կարգերի դեմ: Նար-Դոսը— նովելիստ:

Նար-Դոսի վեպերն ու վիպակները. «Տանտիրոջ աղջիկը», «Աննա Սարոյան» (1885), «Սպանված աղամնի» (1898), «Պայքար» (1911), «Մահ» (1912): Բուրժուական քաղաքակրթության քննադատությունը, բուրժուական դաստիարակությունն ու նրա ծանր հետեւանքները (Աննայի կերպարը), ընտանիքն ու կնոջ դրությունը (Մանեյի և Սառայի կերպարը), բուրժուական ծայրահեղ ամորալիզմը (Թուսյան, Բազենյան): «Ավելորդ մարդու» պրոբլեմը (Շահյան):

Նար-Դոսի պիեսները: Նար-Դոսի խորհրդային շրջանի պատմվածքները:

Նար-Դոսը— ռեալիստ: Նար-Դոսի հողերանական մեթոդը: Վեպերի դրամատիզմը: Տուլատոյի, Դոստոյեվսկու, Տուրգենևի ազդեցությունները: Նար-Դոսի լեզուն, կոկ, անսլաճույճ, հուղական յերանդավորումով: Յուրաքանչյուր ախլի առանձնահատուկ լեզուն:

Կյանքը: Կրթութիւնը թարգմանչաց վարժարանում և ապա Կ. Պոլսի համալսարանի իրավաբանական ֆակուլտետում:

